



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



53

Ltin

✓ 1880




1999



ՊԵՏՐՈՎԻՑԻ

ՕՐՎԻԼԵԼԵԼ, 3



Ի ՄՈՍԿՈՎԱ

**1858.**



ԱՏԵՓԵՐԱԾԻ

ԱՐՔ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ՍԻԿՆԵԱՑ

ՊԵՏՄԱԿԹԻԿԻ

’Ե վերայ ծաղման տոհմին Օրոկէլեանց  
և ’Ե վերայ յարձակման Թաթարաց  
’Ե Հայո,

Յօդուտ Աղբե ’Ե լոյս ընծայեալ

ԱՌԵԼՈՒՄ Տ. ԳԱԷՐԵԳԵՅԻ ՅՅԱՀԱՆՆԻՒՅԱՆԻ

ԱՐԴԵՎԵՄԲՔ և ծախիւք

Պ. ԱռԵԼՈՒՄ ԱՌԵԼՈՒՄ ԳԱԷ-ԼՈՒՅԵՅԱՆԻ  
ԱՐԵԼՈՒՄ :

ՅՈՒՅ. ՅՈՒՅ. ՅՈՒՅ.



Ե ՄՈՍԿՈՒ

Խ ՊԱՊԵՐԻ Ա Պ Ո Ւ Ե Տ Ա Ր Ե Պ Պ Գ Ա Ր Ե Բ :

ՀԱՅ - 1858.

Санкт-Петербургъ

Въ Дѣлѣ № 41000 отъ 21

Санкт-Петербургъ

допущено въ

допущено въ

допущено въ

допущено въ

допущено въ

**ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ,**

съ тѣмъ, чтобы, по отпечатаніи, было представлено въ Ценсур-  
ный Комитетъ узаконенное число экземпляровъ. С.-Петербургъ,  
21 Октября 1857 года.

Цензоръ В. Бекетовъ.

28 1886

41880-60

Ա Յ

Պ Ա Ր Ո Ւ

# ԳՈՒԿԱՄՄԵԼԱՅ

Մի՛ մոռանար, սիրտ իմ, զպարտ քո և մատո՛  
Ներբողական բան ինչ հիւսեալ ջերմիկ սրտիկ:  
Ահա հայիմ հայրենասէր առն յարդասի՛Ս.  
Յանկ 'ի նոսին սէր ազգային զդամ այն':  
Արդ, ով հայ քաշ, բարեհոչակ ձեր այդ համբակ  
Կանխաւ յողջոյն տարածեոցի յազդիս մերուՄ:  
Աջեալ սլառուղք նախնեաց մերոց, ոքք 'ի մթա՞ն  
Նահրանային, ձեօք ելանեն 'ի լոյս ահԱ  
Եւ այդ ձեր ջան եթէ շարժեաց արդ զիս այսպէ՛Ս  
Այլոց ապա զո՞ր խրախոյս տալ չկարէ,  
Նոցա գէթ, որք ունին զողի գորովալի՛Ռ:

Արէկանոն Երեսնէց :

# ՅՈՒ ԽՈԴՈՒՅ Ե-Ա-Ր

Առանձ ոչ ապաց Հայ ապա պահանջ է Ա  
 միաւու քիչու զանակ չեղ մայ նախարարութ  
 Ականարա, մաս պահանջ եւ այս աշխ  
 Այս առար միաւու ուն միան Ո յիշը  
 մայակ ապաց քաշահայութ հայ առ ին ին  
 Առաջ անդրա, պահանջ միան, առաջայ  
 շնորի Ո առ պահ բահայութ պահանջ առաջ  
 Այս առ Ո միանց զան պահանջութ  
 Աթուր առ քա բահայութ առ օն ուն քա այ  
 շնորի առ պահ պահանջ ուն պա պահ  
 Աթուր պար միան պա, Այս պա, Ո

• ՀԱՅ-ՀԱՅ-ՀԱՅ ՊԱ-ՀԱ-Ր

Համառոտ անշեխութեան

շհեղենակէ Տագբենիս.

Հեղինակ մատենիս, Ստեփանոս Արքեպիսկոպոս  
կոպոս Աիւնեաց, էր ՚ի նմին իսկ տոհմէ՝ զորոյ  
գրեացն զպատմութիւն, այր մեծանուն՝ ծաղկեալ  
՚ի վերջ երեքտասաներորդի դարուն և ՚ի սկզբան  
չորեքտասաներորդին։ Լա՛ր նա (որպէս ինքն  
իսկ ասէ ՚ի կատարածի պատմութեանս) որդի  
Տարսայինայ (Օրպէլեանց՝ իշխանին Աիւնեաց,  
որ յամի Տեառն 1280 զքահանայականն ընկալաւ  
զկարգ, և ապա ՚ի վախճանել Արքեպիսկոպոսին  
Աիւնեաց Յովհաննուն՝ առաքեալ ՚ի հօրէ իւրմէ<sup>1</sup>  
՚ի կիլիկիա՝ ձեռնադրեցաւ ՚ի կոստանդեայ կա-  
թուղիկոսէ Մետրապօլիտ Աիւնեաց։ և պատուա-  
սիրեալ մեծապէս յարքայէն Լ ևոնէ՝ դարձ արար  
յամին 1287 յլ թոռն իւր ՚ի Տաթև՝ շքով մե-  
ծաւ։ Խակ վախճան կենաց նորա եղև յամին 1304։

Ե՞ն սորա՝ բաց ՚ի պատմութենէա՝ և այլ գը-  
րուածք երկու՝ ՚ի վաղուց իսկ տպեալք ՚ի կոս-  
տանդնուպօլիս, որոց առաջինն է՝ Արտանուար Ուշ  
՚ի Վետոյ Ա. Լաշնացնէ կամ ՚է վերայ տղթէն Հայոց,

գրեալ ’ի թուին հայոց չեր, ’ի խնդրոյ խաչա-  
տրոյ վարդապետի կեշառացւոյ. և երկըորդն է՝  
Հետնառէն ընդունայ, գրեալ ’ի թուին հա-  
յոց չծա:

**Օ**ւտպագրութիւնս զայս արարաք ըստ միոյ և  
Եթնօտրագիր և անթուական օրինակի ’ի մեր ձե-  
ռը գտելոյ՝ անփոփոխ յամենայնի զհարաղատու-  
թիւն բնագրին պահելով :

**Ա. Յ. Ե.**

Վահագի և մայդաք վրայոց մասնաւոցուն Չում է՝  
մաքանակ (մաքանակ ուն մաքանակ) ամ դուք սմբակութեացելուն առաջ  
վրցու (սմբակացնաւ մաքանակ ու մատ վահա-  
գի ամանաց սմբականացուն 0821 մատիւ վահա-  
գի ամանացուն ուն) Սմբականի ու արարաք քայլ  
մատաւուն է ամանաց ամանացն սմբական ու մատիւ  
մատաւուն ու ամանաց սմբականացուն ամբուժ ու  
ամանաց ու ամանաց սմբականացուն սմբական  
սմբական մատիւ սմբականացուն ամբուժ ու մատիւ  
մատաւուն է ամանաց սմբականացուն ամբուժ ու  
ամանաց սմբականացուն սմբական մատիւ սմբական  
սմբական մատիւ սմբականացուն սմբական մատիւ  
սմբական մատիւ սմբական մատիւ սմբական մատիւ  
սմբական մատիւ սմբական մատիւ սմբական մատիւ  
սմբական մատիւ սմբական մատիւ սմբական մատիւ

Ա պահ մէջ Յիսուսառարքաւուն ( Եղանակ, Եւն  
առաջ է ին և ուղիւն . և վառ գոլոյ նոցո շայտ  
աշխատուն և վառ բաղաւ բանից և գործոյ զըռոյտ  
յութեւ :

---

Ե սկզբան նահապետութեան աշխարհիս Հա-  
յոց և Արաց, և 'Ե ցեղապետութեան մերոյինս  
սեռի նախնուոյն՝ Յօնորգոմայ, Էին նորաորդիքութ,  
արուորագոյնք և հսկայակերպք . որոց իրեցագոյ-  
նըն՝ Հայկ, և երկրորդն՝ Քարթլոս, երրորդն՝  
Քարդլոս, չորրորդն՝ Մովկան, հինգերորդն՝  
Լեկան, վեցերորդն՝ Հերոս, եօթներորդն՝ Կով-  
կոս, ութերորդն՝ Եղիշս : Եպա բաժանեալ Յօնոր-  
գոմայ զժառանգութիւնս՝ որդւոց իւրոց, տայ ըզ  
Հայաստան աշխարհն բոլոր սահմանօքն՝ Հայկայ,  
և զծմակային աշխարհն Հիւսիսային՝ Քարթլոսայ  
և այլ եղբարցն : Խակ Քարթլոս գնաց 'Ելեաւնն՝  
որ կոչի Երմաղ, և անդ շինեաց իւր տուն, և ամ-  
րոց մի անառիկ 'Եպատշաճաւոր տեղլոջ . և կո-

չեաց զբերդն՝ Արքեթ, զոր այժմ Շամշոյլտէ  
կոչեն։ Եւ անուանեցաւ աշխարհն այն՝ ի Խունա-  
նայ մինչև՝ ի ծովն Ապերոյ յանուննորա՝ Քարթլ։  
Ապա յետ բազում ժամանակաց որդիք զհարս փո-  
խանակելով՝ եկն նահապետութիւնն Քարթլայ  
մինչ ի ժամանակս թագաւորութեանն Պարսից  
մեծին Խոսրովու։ որ Քեքաւուս կոչեցաւ։ Եւ  
սահման էր Արաց՝ կոչել զգլխաւորն իւրեանց՝  
Տանուտէր, զի ոչ ունէին թագաւոր։ Եւ նստէր  
Տանուտէրն ի Քարթլ, ի մեծ քաղաքին Մցիւ-  
թայի, որ շինեցաւ ի Մցիւթուե՝ յաւագ որդ-  
ւոյն Քարթլսայ. որք և նեղեալ յայնմ ժամանա-  
կի ի բռնաւոր թագաւորէն Պարսից, կամէին ըզ  
մահ ընդ կենաց փոխանակել։

Եւ էր կացեալ յայնմ ժամանակի պետ աշխար-  
հին Արաց՝ Ադարմոս Պարսիկ՝ հրամանաւ Աքրի-  
տոնայ, որ տիրեալ էր Պարսից և Արաց և Աշ-  
ուանից։ Այս այն Ադարմոս էր՝ որ շինեցաց վերըս-  
տին զՄցիւթայ և պարսպեաց կրաշաղախ վիմօք,  
և եղ պարիսպ յԱրմաղ լեռնէ մինչև՝ ի գետն  
կուր։ Եւ յետ վախճանի սորա արք ըորք տիրեցին  
Արաց. և խոռվութիւն և ապականութիւն տիրէր  
ամենեցուն առ հասարակ, էր որ ի Քեքաւու  
Խոսրովուն, և էր որ զկնինորա՝ ի Քվէ Խոսրո-  
վուն. և էին Արք ի մեծ վշտի և կային յուսա-  
հատեալք յամենայն կողմանց։

Ահա ընդ ժամանակսն ընդ այնոսիկ անկանէր  
 աղմուկ շփոթի և խռովութիւն մեծ 'ի մէջ թա-  
 գաւորութեանն **Ճ'ենաստան** աշխարհէ, որ յարե-  
 ելս կոյս անդր է քան զաշխարհն Խալանտրաց,  
 սահմանակից Խազրաց և Հնաց, որ և ձգի եր-  
 կայնութեամբ մինչև ցլամաւոն լեառնն: Քանզի  
 'ի մեռանել թագաւորին **Ճ'ենքակուր** կոչեցելոյ՝  
 թագաւորազունքն սկսան պատերազմի ընդ միմեա-  
 նը, և զօրացեալ միոյն կողմն՝ փախստական լինի  
 միւն, որ էր այր աջողակ և պատշաճագեղ, ու-  
 ժեղ և անձնեայ, երիտասարդ հասակաւ. որոյ  
 առեալ զընտանիս իւր և զգունդն թագաւորական  
 գանձիւքն, օդապարիկ երիվարօք սրաթոիչ լեալ՝  
 անցանեն ընդ բազում՝ աշխարհս այնքան ահագին  
 կերպարանօք՝ զի ոչ ոք համարձակէր ընդ առաջ  
 լինել նոցա. և անցեալք ընդ դուռնն **Պարիալայ**  
 Երրվերին ակնարկմամքն եկին յաշխարհն Քարթ-  
 լայ առ Տանուտէրն Վ'ցիսիթոյ, և տեսին զնոսա-  
 նեղեալ և 'իմեծ վտանգի տարակուսեալ 'ի Պարս-  
 կացն: Ապա խօսին ընդ Տանուտէրն և ընդ աւա-  
 գագոյն արսն, և ասեն » Վ'եք 'ի թագաւորացն  
**Ճ'ենաց** եմք, և հատուածեալ յեղբարց մերոց՝  
 եկաք աստ, և հաճեցաք ընդ ամուր աշխարհս ձեր.  
 և աստուածք ձեր վասն վշտիդ ձերոյ ածին զմեզ  
 յօդնութիւն ձեզ: Արդ՝ մեր կամք է՝ կամ դադա-  
 րել առ Պարսից թագաւորութեանն, և կամ ան-

ցանել առ ինքնակալսն Յունաց։ Բայց թէ ձեզ հա-  
 ճոյ թուի՝ պատրաստեցէք մեղ տեղի հանգստեան։  
 և կամք աստես և թափեմք զձեզ ՚ի նեղաց ձե-  
 րոց։ և թէ ոչ երթամք զՃանապարհս մեր՝ ուր և  
 Կոստուածն մեր հոգասցեն։ Խակ տեսեալ աւագ  
 Տանուտերաց աշխարհին զայնպիսի արս քաջակո-  
 րովս և ուժեղս, և լուեալ զհաճողական բանս նոցա՝  
 մեծապէս ինդացին ՚ի վերայ եկելոցն, և արարին  
 խրախութիւն մեծ, և բարձր փառօք և մեծաշուք  
 պատուով ընկալան զնոսա և սիրեցին յոյժ յոյժ։  
 Եւ զանառիկ ամուրն (Օրբեթ՝ որ շինեալ եր  
 մեռամքն Վրարթլայ՝ ետուն նոցա տուն բնակու-  
 թեան և տեղի ամրութեան, և գաւառս բազումն  
 և աւանս մեծամեծս և բերդերս ետուն ՚ի ժաւան-  
 գութիւն նոցա։ Կոպա միամտեալ ՚ի տեղւոցն՝  
 բնակեցան յ(Օրբեթն։ Եւ վասն անուան բերդոյն՝  
 յետ յոլով ժամանակաց (Օրբուլք կոչեցան, այ-  
 սինքն՝ (Օրբեթեցիք. զի սովորութիւն է ազգին  
 այնմ անուամք տեղւոյն կոչել զիշխանմն, որպէս  
 Արթէուլքն և Արփէուլքն և Արաջուլքն։ և  
 ՚ի Հերէթոյ՝ Հերիսթօքն, և ՚ի Գաւախեթոյ՝  
 Գաւախուլքն, և ՚ի Լախեթոյ՝ Լախեցիքն։ և  
 ՚ի Լեխեթոյ՝ Լեխթիմայքն, և այլ բազումք, որ  
 մինչեւ ցայսօր սակս այսը պատճառի (Օրբէլք կոչե-  
 ցան ազգքն այն, որք և յաւաջն Շենեուլք կոչե-  
 ին, այսինքն Շենացիք։

Աւ արդ՝ մինչ այս այսպէս լինելը, ապա յինքեանս ժողովեցին զտունն Արաց, և զօրս գումարեալ՝ յարեան ՚ի վերայ ամենայն նեղացն, և կոտորեալ հալածական արարին՝ ընդդիմանալով Փարսից. և եղեւ խաղաղութիւն յաշխարհին յայնըմ: Ա ասնորոյկարգեցին զնոսա սպարապետ և զօրագլուխ ամենայն տանն Արաց. և ՚ի թագաւորելն Արաց առաջին թագաւորին Փառնաւազայ՝ առաւել պատուեցան (Օրբելքն ՚ի նմանէ. և ՚ի Արաց աշխարհին ո՛չ գոյր ոք նման նոցա կամ հաւասար, բայց միայն ՚ի թագաւորէն: Աւ ահա զայս ծանեաք ընդ աղօտ ինչ ՚ի Արաց պատմութենէն: Բայց վասն նախանձու Գրեորգէ թագաւորին՝ որ աղգաւ ջնջեաց զնոսա ՚ի Արաց աշխարհէն, ջնջեցին զանուանս նոցա ՚ի պատմութենէն իւրեանց և յամենայն գրենացն և յեկեղեցեացն: Ա ասնորոյեմբ քննեալ և տեղեկացեալ՝ ծանեաք զսակաւն ՚ի բաղմաց՝ ՚ի գիտող արանց, և ՚ի մնացեալ յիշատակարանաց ուրեք ուրեք, ևս և յաւանդութեանց նախնեացիւրեանց՝ զոր ծանուցին հարք որդւոց մինչեւ ցմեղ: Այս չգտեալ մեր յիշատակ նախնական զրուցաբանութեանց նոցա. նա և ամենայն արութիւնք և գործք երևելիք ՚ի տանն Արաց աղգին (Օրբելեանց ՚ի նոցին ժամանակագրոցն՝ ըոր Քարթլիս ցխաւարիպայ կոչեն, վասն այն մեք ո՛չ գիտացաք զորպէսն և զկարգ բանիցն, զի և ըստ կար-

Դե շարայարեալ էաք՝ ի մատենիս։ Բայց զոր գըտաք՝ ի հայալեզու գիրս սակաւ ինչ յեշատակ՝ դիցուք։ ևս և զվախճան կատարածի նոցա, զոր հաւաստեաւ ծանոյց մեղ գեղեցիկ պատմութիւնն Արեթարայ Ենեցոյ։

Երդ՝ ՚ի թուականութեանն հայոց նղը, ՚ի թագաւորութեանն Արաց՝ Պաւթի, և հայոց՝ Պագկայ շահանշահի՝ որ ՚ի Անանդ, և ՚ի կայսերակալութեանն Յունաց Առնոմախին, տեսին նուազեալ զաղզս քրիստոնեից հագարածին Խամայելացիքն, և ձայն տուեալ միմեանց ՚ի Խորասան, ՚ի Խորազմաստան, ՚ի Փարս և ՚ի Քրման, ՚ի Բռուխար և ՚ի Արագանդարան, յլլաղ, ՚ի Բաղդատ և ՚ի Բասր, յլլուան և յլլուպատական, ժողովեցան անհուն բաղմութիւնք Պարսկաց և Խոզըկաց, Խորազմաց և Երապետաց, ևս և Ակիւթացի Յառաստանեաց։ և Եկեալ բանակեցան ՚ի դաշտին Լարնայ անթիւ և անհամար բանակօք։ և Խորհեցան Խորհուրդ զոր ոչ կարացին հաստատել, այսինքն բառնալ և Ծնջել զկրօնս և զանուանս քրիստոնեից, ՚ի հայոց, ՚ի Արաց և ՚ի Յունաց աշխարհէն։

Եհա համբաւ դառնալուր և տիեզերակործան հրոսակին հասաներ յառաջագոյն առ կայսրն Յունաց, և դողումն սարսուալի հասեալ կալաւ զերի կամունս ամենայն մարդոց։ Աամս որոյ յղէն պյոր

զԱռմինոս Տրապիզոնոյ զօրօք, և խնդրեն միաբան  
 օղնականութիւն ՚ի Նայոց և ՚ի Ալրաց, թերեւ  
 կարասցեն զերծանիլ յայնմ անդնդապառյտ և ա-  
 հագնեռանդ բարկութեանցն հարաւայնոյ. զորլու-  
 եալ թագաւորին Դաւթիւ Գագկայ՝ ոչ համար-  
 ձակեցին ընդ առաջ ելանել Խամայելեան զօրուն,  
 այլ մեծապաղատ թախանձանօք հաւանեցուցեալ  
 զքաջն անպարտելի զիպարիսն (Օրբելեանց՝  
 գնալ և խառնիլ ՚ի զօրն Յունաց և ընդդիմանալ  
 մարտին եկելոյ, ինքեանք զօղեալ որ ջացան յամու-  
 րըս աշխարհին: Լուսա յանձն առեալ Լիպարտի  
 անվախ սրտիւ՝ ասէ» Եսերթամ ընդառաջ այլազ-  
 գեացն, և դնեմ զանձն իմ ՚ի վերայ քրիստոսական  
 հաւատոյս, և զօրութեամբ Լուսուծոյ կամդար-  
 ձուցանեմ անդրեն և կամ մեռանիմ վասն Վրիս-  
 տոսի. բայց ովլ թագաւոր յանձնառնեմ զյետնորդ-  
 քըս իմ քեզ. զի մի՛ վասն նախանձոտ և չարաբարոյ  
 ազատացդ Ալրաց նենգեսցես ինչ սոցա, և զըր-  
 կեսցես ՚իպատուոյ և ՚ի հայրենեացս մեր»: Օչայս  
 ասացեալ ինքն Լիպարիտ՝ հանդէս արար ազատաց  
 և զօրաց իւրոց, զի ունէր զկէս թագաւորութեա-  
 նըն: Եւ անցին ՚ի հանդիսին եօթն հարիւր ազատք  
 մեծամեծք, որք էին սեպհական ծառայք նորին, և  
 վեշտասան հաղար արքպատերազմնողք: Խակ ՚ի զօ-  
 րացն արքունի էառ տասն հազար այր, և գնացեալ  
 ՚ի Ա անանդ ՚ի դաշտն կարուց՝ խառնեցան ՚ի նա-

զօրքն Հուռմոնց հնգետասան հաղար այր, և եղեն  
 միանգամայն քաւասուն և մի հաղար հեծեալ: Եւ  
 զի այլազդիքն կոտորէին նախ զԱրդրու գիւղ և  
 ասպատակեալ էին զամենայն շրջակայ գաւառն, և  
 ընակէին 'ի նոյն դաշտի, ապա ճակատեցան ընդ  
 դէմ իրերաց ընդ լուսանան այգուն, և յօրինեցին  
 զւազմն հանդիսին երեքկարգեան գնդօք, նախա-  
 մարտիկս և միջնամարտիկս և վերջապահ: Եւ զի  
 առ անթիւ բազմութիւն] ասմայելացւոցն] իպար-  
 տեան զօրքնոչ ինչ երեէին, այլ եբը ջրտուս կամ  
 զինաքաղս թուէին նոցա, տեսեալ զայն անպարտե-  
 լի ախոյեանն քաջ [ իպարիտ՝ զօրացոյց զգունդն  
 իւր, և ասէ » Ա՞ի երկնչիք, այլ միայն զօրացիք ան-  
 ուամբն՝ Քրիստոսի, և կնքեցէք զձեզ նշանաւ սուրբ  
 խաչին, և մեր է յաղթութիւնն»: Եւ ինքն իջեալ  
 յերիվարէն ծունը դնէր, և կնքէր զինքն նշանաւ  
 սուրբ խաչին և յանձն առնէր Քրիստոսի, և կա-  
 պէր 'ի պարանոցն զմասն որ 'ի փրկական խաչէն.  
 և այնպէս զինեալ զինքն, և հեծեալ 'ի Տաճիկ  
 երիվարն՝ ընկենոյր զոսկէնկար վահանն 'ի թի-  
 կունսն, և զՃօՃ նիզակիին յահեակ բազուկն, և ըդ  
 լայն պողովատիկ շմշիրն երկբերանի յաջ ձեռինն,  
 և զվաղըն ահագին 'ի ներքոյ բարձիցն՝ իբը զուռն  
 դարբնաց և կամ զսակը կտցաւոր քարահատաց,  
 անցեալ 'ի մէջ ուազմաւոր հանդիսին՝ արշաւէր  
 սիգալով յայսկոյս և յայնկոյս. և ոսկեհուռ զըէ-

Հեն և 'ի սաղաւարտէն նշոյլք հատանէին։ Եթը  
 զարծիւ խնդրէր 'ի նոցանէ մենամարտիկս։ ասէր  
 «Ես եմ ։ իպարիտն Ափխաղաց։ Եկայք քաջքդ  
 Վարսից և Արեաց։ և նախ մենամարտեսցուք ընդ  
 միմեանս»։ Եւ թէպէտ բազում անգամ խնդրէաց,  
 ոչ ոք եշխեաց ելանել ընդ առաջ նմա։ և  
 յոր տեղ սլանայր ։ իպարիտն իբրև զարծիւ և խո-  
 յանայր 'ի վերայ նոցա, յետո յետո փախչէին՝ ըդ  
 միմեանս առաթուը կոխելով։ Ապա իբրև գիտաց  
 ։ իպարիտն զի բեկան սիրոք նոցա, և թուլացաւ  
 զօրութիւն նոցա, դարձաւ յիւր ռազմն, և քաջա-  
 լերէալ յառաջ շարժեաց։ Եւ գոչեցին ահեղ ա-  
 ղաղակաւ։ և խառնեցան ընդ միմեանս, և խմբեցաւ  
 պատերազմահագին իմն դղրդմամբ, որ թուերիբը  
 որոտումն ամպոց և ճայթմանք փայլատականց։ Եւ  
 ինքն ։ իպարիտ իբրև զամպ հրախառն մտանէր և  
 ելանէր։ և կայծակնահար առնէր զբազումն, և զօ-  
 րէն հրոյ ընդ եղեգն փոթորկեալ՝ Ճեղքէր զուազմն  
 նոցա, և անցանէր յայն կողմն։ և յաջ և յահեակ  
 հոսէր գետո արեանց, և դնէր կոյտո դիականց։ և  
 հատանէր յայլազգեացն գունդս գունդս։ և զայն  
 իբրև զերամն նապաստակաց տապաստ արկանէր  
 դաշտին։ Եւ այնպէս կոտորեալ յաղթեաց ։ Խսմա-  
 յելացւոցն, և փախստականարար զսակաւմնացորդ-  
 ուըն քաջ ։ իպարիտն զօրութեամբն Յիսուսի  
 Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ և ապա և 'ի հասա-

բակել աւուրն դարձան 'ի մեծաջան վաստակոցն  
մեծաւ գոհութեամբ և բազում ուրախութեամբ :

Դակ անիծեալ և տիրասպան աղատքն Արաց  
երկուցեալ յահագին զօրութենէն նորա, և խոր  
հուրդ առեալ ընդ դետեպուլ զօրագլուխսն Ե ի  
պարտի՝ յանկարծակի հատին զջիլ երիվարի նորա,  
և ընկեցին յերկիր զլի իպարիտն. և 'ի մէջ առեալ  
զնա բազմութեանն՝ սպանին 'ի տեղւոջն, և ածին  
խաւար և սուդ քրիստոնէից. զոր և իմացեալ Դա  
մայելացւոցն՝ մեծաւ խնդութեամբ դարձան ան  
դրէն. և սուր 'ի վեր առեալ կոտորեցին զզօրսն  
Արաց. և ոմանք փախստական եղեալ ցրուեցան ընդ  
երկիր : Եւ այն էր կատարած կորստեան աշխար  
հիս հայոց և Արաց, զի տիրեաց Տաճիկն ընդհա  
նուր գաւառաց. առին սակաւ մի յետոյ զլնի, որ  
'ի շժգ թուականին Արփասլան Առւլտանն. առին և  
զլիարս, առին զբոլոր գաւառն Երակայեզլ ա  
նանդայ և զլրշարունեաց և զլրարատեանն, և ըզ  
Աիսական աշխարհս, և զլաղացն, և զամենայն  
երկիրս մինչ 'ի դուռն Տփխեաց :

Եւ արդ՝ զայսպիսի դուռն մեծ կորստեան և  
աշխարհագումար կործանման քրիստոնէից յայնմ  
աւուր բացին անիծեալ և տիրասպան զօրքն Ար  
աց : Դայց ես զսպանումն Ե իպարտի համարիմ  
ոչ կորուստ, այլ գիւտ մեծի փրկութեան. զի ե  
դեալ զանձն 'ի վերայհօտին Վրիստոսի՝ մեծապես

Հանդիսացաւ, և անպարտ սպանմամբն յիւրոցն՝  
մարտիրոսական արեամբ պսակեցաւ, և գնաց առ  
ամենաթագաւորն Վրիստոս, զի՞նմանէ ընկալցի  
զվարձու և զպարգևս մեծավաստակ աշխատութեա-  
նըն իւրոյ:

Խոկ ապա հաւատարիմ ծառայք նորա բարձին  
զդիակն գեղեցիկ երիտասարդին և անպարտելի  
քաջին՝ մեծաւ ողբով, և տարեալ ՚ի կարս՝ կազ-  
մեցին դագաղս և զարդարեցին ոսկեհուռ հանդեր-  
ձիւ և արքայական Ճոխութեամբ, և առեալ տարան  
՚ի մեծ հանդիսաւոր վանսն իւրեանց ՚ի Բալթանիայ՝  
որ էր շինեալ նախնեաց նորա տուն գերեզմանի  
ինքեանց: Եւ եկեալ թագաւորն Ուաւիթ ամե-  
նայն մեծամեծօքն, և արարեալ կոծ մեծ ՚ի վերայ  
նորա՝ եղին ՚ի տապանի ընդ հարս իւր:

Խոկ պատիւե բարձ ցեղին ( Ծրպելեանց ՚ի տան  
թագաւորին էր այս, լինել սպասալար ամենայն  
զօրացն, և հրամանատար ամենայն աշխարհին Ալ-  
բաց, և ամենայն գործակալք տանն արքունի ընդ  
ձեռամբ նոցին. ունել սեպհական երկոտասան դրո-  
շը, և յամին դրօշ՝ հազար այր: Եւ զի սահման էր  
թագաւորին՝ սպիտակ լինել վառն, և կարմիր նը-  
շան ունել, հրամայեցին սոցա՝ կարմիր ունել ըլ-  
վառ դրօշին, և սպիտակ նշան ՚ի վերայ. և ՚ի շրջել  
առաջի թագաւորին և ՚ի կանգնել՝ ունել ՚ի ձեռին  
գաւազան առիւծագլուխ, և ՚ի ժամ Ճաշոյն առան-

Ճին նստել՝ ՚ի բազմականացն՝ ՚ի վերոյ քան զամենայն դետեպուն նախարարսն ՚ի վերայ բարձի, և ուտել հաց արծաթի սեղանաւ։ Եւ սոքա էին թագադիրք թագաւորին։

Եւ արդ՝ յետ բազում ժամանակաց ՚ի թագաւորութեանն ՚յաւթի հզօրի որդւոյ զեկորդէի մեծ սպասալարն Արակեն Խւանէ յոյժ արիացեալ՝ ընդարձակեցոյց զսահմանն Արաց՝ պատերազմեալ ընդ Տաճկաստան։ զի առին զՏփխիս ՚ի Տաճկէն և զՏավուշ, զՊագ, զՏերունականն, զՎաւե, և զՎնի ՚ի շնչը թուականին։ Վամ որոյ առաւել սիրեցաւ և պատուեցաւ ՚ի թագաւորէն։ և ՚ի վերայ հայրենեաց իւրոց տուաւ և նմա ՚ի թագաւորէն Խաւե իւր գաւառովն, և Վագարակն սեղի դարապասի, և Շամշոյլտէ՝ որ է հայրենիք նորին՝ վերստին տուաւ գաւառովն։ և այս մեծ սիդիլով և թագաւորական մատանեաւ հայրենիք հաստատեցաւ նոցա։

՚յակ ՚ի մեռանելն ՚յաւթի հզօրի առնու զթագաւորութիւնն որդին նորա քաջն ՚յեմէտրէ, որ անց գովութեամբ ընդ նախնիս իւր, և թագաւորեաց ամս երեսուն և երեք։ Սա առաւել սիրեցաւ և պատուեաց զԽւանէ և զորդին իւր զՄիքատ։ ՚յսորա աւուրս առին Խւանէ և Վմնպատ զԽյունան, որ ՚ի բազում ամաց եր առեալ Տաճկին։ և այն ևս հաստատեցաւ հայրենիք նոցա ՚ի թուականին շնչ։

Յետ այսորիկ մեռանի խռանէ ծերացեալ  
աւուրբք, և առնու զտէրութիւննորա որդին իւր  
Ամբատ: Եւծանի՛ր՝ զիսոքա խնամութեամբ խառ  
նեալ էին ընդ թագաւորին Արաց և ընդ թագաւ  
որին Հայոց Աթւրիկեանց՝ որք էին Պագրա  
տունիք: և վասն այնը պատճառի առին 'ի նոցանէ  
զՊագրատունի անուանս, այսինքն զԱմպատ, և  
զՎանէ՝ որ է Յովանէս, և զ իպարիտն և զ լ  
իկումն և զ Եթւրթէլն՝ ունին 'ի հին նախնեացն՝  
որ 'ի Ճենացն եկին, և զայլ անուանս 'ի Արաց  
առին: Պարձեալ և առնու միւս խռանէ՝ Արուլէ  
թի որդին՝ զՊամանիս:

Եւ յետ բազում յաջողուածոց և մեծամեծ  
քաջութեանց մեռանի Ակմէտրէ թագաւոր 'ի ո՛է  
թուականին, և առնու զթագաւորութիւնն որդի  
նորա Պաւիթ, նման հօրն, այլ հզօր և իմաստուն,  
և կեցեալ ամս երկու և սա՝ մեռանի: և 'ի ժամ  
վախճանին կոչէ զկաթուղիկոսն և զմեծամեծ դէ<sup>շ</sup>  
տէպուլսն, կոչէ և զեղբայր իւր զՊարդի և զփոք  
րիկ տղայն իւր զԱկմնայն, և դնէ առաջի իւր զա  
ւագ խան և զփրկական խան և զաւետարանն, և  
ասէ. «Ու մեծամեծքդ Արաց, դուք ինքնին քաջ  
դիտեք՝ եթէ որպէս ջանացհայրն իմ 'ի վերայձեր,  
և կրկին նորոգեաց զթագաւորութիւնս զայս, և  
'ի ժամ մահուն մեծամեծ ուխտիւ և գրով ինձ  
շնորհեաց զաթուս, և ես այժմ մերձ եմ 'ի վախ»

Ճան, և իմ եղբօրդ Գյուրգէի ոչ ինչ հաշիւ և  
 բան ոչ գոյ ընդ այսմ աթուոյ. արդ՝ որպէս հայ-  
 ըլն իմ ինձ շնորհեաց սեպհական զայս տախտ ար-  
 քայութեան, նմանապէս և ես իմում զաւակիս  
 Պահմայիս շնորհեմ՝ ձեր ամենեցուն վկայու-  
 թեամբ : Եւ դու Գյուրգի եղբայր իմ, կաց ՚ի  
 տեղի իմ և արա զզօրապետութիւն աշխարհիս, և  
 կե՛ր զքո բաժին ժառանգութիւնն զոր հայր իմ  
 ետ քեզ մինչև զարգացի մանուկս իմ : Եւ յա-  
 ռաջ կոչեալ զիւանէ որդի Ամբատայ (Օրբե-  
 լեան՝ երդմնեցուցանէ զնա վասն մանկանն՝ պահէլ  
 զուխտ անդարձին. և առեալ զձեռանէ մանկանն եղ  
 ՚ի ձեռն Խռանէի և ապսպարեաց նմա, և զայլ դէ-  
 տէպուլսն զամենեսին երդմնեցոյց՝ ոչ նենդել տղա-  
 յին, այլ ՚ի ընուլ հասակին՝ օծցեն զնա թագաւոր:  
 Օ այս արարեալ՝ վախճանի ինքն, և դնի ընդ հարս  
 եւր ՚ի Գյուլաթ: Եւ յայնմ օրէ և յառաջ լինէր  
 մանուկս ՚ի տան Խռանէի և մնանէր և զարգանայր:  
 Խսկ Գյուրգի յինքն յանգուցեալ զսիրտ մեծամեծ  
 իշխանացն ես և զկաթուղիկոսին՝ կամէր թագա-  
 ւորել. և ոչ իշխէին զխորհուրդն մեծին Ամբա-  
 տայ (Օրպելեան և որդւոց նորին Խռանէի և Լի-  
 պարտի յայտնել: Եպա յետ ամսեան մի ժողովե-  
 ցին զամենայն դէտէպուլս և զաղատս առ Գյուր-  
 գի. ընդ որս գնաց և Խռանէ իւրայովքն. որում և  
 յայտնեալ Գյուրգէ զխորհուրդն՝ բազում ողոքա-

նօք հաւանեցոյց զնա ասելով, եթէ 'ի ընուլ հա-  
սակի եղբօրորդւոյն իմոյ՝ ոչ զրկեցից զնա, այլ  
ըստ անդարձի եղբօրն իմոյ՝ դնեմ զնա 'ի տախտ  
թագաւորութեանս: || ասն որոյ ամենեցուն միա-  
բանեալ՝ օձանեն զնա թագաւոր, որ և էր յաջո-  
ղակ յամենայն գործո արութեան և յոյժ հանձա-  
րեղ: Եւ յաւուրս նորա եղեւ բազում ընդարձա-  
կութիւն թագաւորութեան նորա. և բազում պա-  
տերազմունս միշտաց իւրով անձամբն, և 'ի ձեռն  
արի և քաջ սպասալարին խւանէի դողացոյց զա-  
մենայն տունն Պիարսից և Յուուլքաց:

Այս Գահորգի էառ զլ'նի քաղաք 'ի ոժ թը-  
ւականին և զամենայն տունն Շիրակայ, և ընոր-  
հեաց մեծին խւանէի՝ ամիր սպասալարին || ը-  
րաց՝ որդւոյն Ամբատայ (Օրպելեան. և սեպհակա-  
նացաւ նմա հայրենիս: Այս խւանէ միանգամ եհար  
Շահիարմէնն 'ի դուռն Անոյ. որեկեալ էր քա-  
ռասուն հազարաւ 'ի վերայ քաղաքին. զի թէպէտ  
գայր թագաւորն Գահորգի յօդնութիւն, այլ սախկ  
էր միող մարտին. և միանգամ փախոյց զմեծ աթա-  
բակն Ելտկուզն 'ի դաշտին Գագագ, որ եկեալ  
էր հարիւր հազարաւ 'ի վերայ Գահորգի, և կամէր  
կոտորել զլի իրս ամենայն, և ըմբռնել զթա-  
գաւորն. զոր մեծաւ հնարիւք և արիական քաջու-  
թեամբ այնքան 'ի նեղ էարկ խւանէ՝ զի 'ի  
գիշերի թողին զվրանս և զզենս և զանհունկարասիս

իւրեանց և զբեռնակիրս, և փախեան մազապուր։  
Ծայց թէպէտ զայս ամենայն առնէր և այլքաղում  
երախտիս և գործս մեծամեծս առ թագաւորն,  
սակայն նա վերին երեսօք 'ի մեծամեծ փառս և 'ի  
պատիւ բարձրացուցանէր զնա, և 'ի սրտին միշտ  
կասկածէր 'ի նմանէ վասն տղային՝ որ նմա յանձ  
նեցաւ, և խնդրէր ժամ դիպող դաւել նմա ծա  
ծուկ հնարիւք և ոչ գտանէր 'ի սրտին զայս և ս  
խանէ։ Ապա հայրն Ամբատ ծերացեալ աւուրբք  
մեռանի, և դնի ընդ հարս իւր. և ժառանգեն զիշ  
խանութիւնն իւր որդիքն Խաւանէ և Եղիպարիտ։

Խակ 'ի թուականին Հայոց ո՞իզ եղև աղմուկ  
շփոթի 'ի մէջ թագաւորութեանն Արաց, և  
ընաջինջ կործանեցաւ տունն ( )ըպէլեանց. զի 'ի  
թագաւորէն Գրէորդէ ամս քսան և մի, և 'ի ընուլ  
հասակի երիտասարդութեան Պահմային, մինչ  
նստէր Խաւանէ եղբարբքն և որդւովք իւրովք Ան  
դարակն կոչեցեալ դարապասի, և խրախանային 'ի  
միասին, դային առ նա 'ի մեծամեծ դէտէպուլտա  
ցըն. դայր և Պահմայն, և ասէին ընդ նմա. «ԵՅի  
շեա, Խաւանէ, զուխտն քո և զերդումն՝ զոր երդու  
ար թագաւորին Պաւթի, և մի՛ ուխտազանց լինիր.  
ահա հասեալ է ժամ թագաւորեցուցանելոյ ըլ  
մանուկս Պահմայ. և Գրէորդի կայ նստեալ 'ի Ա  
խատէ սակաւ արամքք, և մեք ամենեքեան հաստա  
տուն եմք յայնմ երդմանն՝ զոր երդուաք հօրսորա»։

Եպա ասէ Խռանէ՝ «Բա՛ւ լիցի մեղ այդ՝ զի խոր  
 հեսցուք սպանանել զօծեալ թագաւոր. այլ վասն  
 երդմանն մեր և ուխտին ըմբռնեսցուք զԳակորդի,  
 մինչև թագաւորեցուցանեմք զԴակմայդ, և ապա  
 առնումք՝ ինմանէ ուխտ երդմանն և ձեռագիր՝ զի  
 հնազանդ կացցէ եղբօրորդւոյ իւրում, և արձա.  
 կեսցուք զնա՝ զի կացցէ և նստցի յիւրում բաժնին  
 ժաւանգութեանն՝ զոր հայր իւր ետ նմա»։ Եւ  
 զայս ասացեալ՝ հաւանեցան ամենեքին, և սկսան  
 զօրս գումարել փութանակի։ Եւ ուեալ զայս խոր  
 հուրդ անարգագոյն մանկան միոյ, և երթեալ՝ ի  
 գիշերի ազդէր թագաւորին. և նորա հեծեալ  
 յերիվար փութանակի փախչի և անկանի ՚ի Տըփ.  
 խիս, և ամրանայ անդ. Օոր և անգիտացեալ Խ.  
 ռանէի՝ հեծեալս գումարել, և զօրս կազմէր։ Եւ  
 էին միաբան ամենայն դլխաւորք և ազատք Արաց  
 ընդ Խռանէի, և ամենեքեան համագունդք դիմեալ  
 եկեալ էին առ նա յԱղարակն դարապաս. «Բար.  
 թլիս հերիսթօքն, և Պօրղօրայքն, և Պաւա.  
 խուքքն, կախայն և որդէք իւր, կամրագէն մեծ և  
 ջաղէլ, Եմնայն և Տաշրացիքն, և կայենեցին  
 հասան, և Անեցին Գրիգոր Եպիրատեանց, որոց  
 զօրքն էին թուով աւելի քան զերեսուն հազար,  
 Խսկ թագաւորն Գակորդի միայն առանց զօրաց  
 կայը ՚ի Տփիսիս, և կոչէր առ ինքն զլսփչախ ոմն  
 խուպասար անուն, և եղիտ արս իբր հինգ հազար,

և այլ ոչ ուներ օգնական զոք։ Եպա իբրև (լուան) զմուտն արքայի՝ Եփիսիս և զամրանայն նորա անդ, ոչ գնացին՝ ի վերայ նորա. այլ սպասեին ելանել անտից։ Եւ մինչ երկարէր գործն, որպէս օրէն է մարդկային անհասատ բարուց, եւ մեծն լիամրագէլ՝ ի միաբանութենէ նոցա, և գնաց՝ ի ծածուկ առ Գակորդի։ Օ այն տեսեալ և Գարիգոր Արժիստոսեանց, նա ևս գնաց առ Գակորդի։ «Եմանապէս և այլքն սկսան մի մի քամիլ, և գաղտագողի գնալ առ Թագաւորն։ Եւ այնուհետեւ սկսաւ զօրանալ կողմն Գակորդէի, և նուազիլ կողմն Պակմնայի։ Քանզի որք երթային առ Գակորդի՝ մեծաւ պատուով ընդուներ, և անչափ պարզեօք խրախացուցաներ, և զամենայն հայրենիս և փարթամութիւնս (Ծրպէլեանց խոստանայր տալ նոցա։ Յայնժամ իբրև զօրանայր և բազմանայր Գակորդի, և գիտէր զի նուազեալ էր կողմն եղբօրորդւոյն և Խւանէի, գնաց մեծաւ պատրաստութեամբ՝ ի վերայ նոցա. զոր և լուեալ Խւանէի՝ հորդեաց զամենայն ստացուածս իւր՝ ի բերդն Ծամշոյլտէ, յորում և կայր տուն գանձուց նոցա՝ ի հին նախնեացն լի՛ անբաւ կարասեաւ, և կացոյց անդէն բերդապահս՝ ի գլխաւոր արանց։ Եւ ինքն առեալ ըլ զօրսն իւր, զմեծ իշխանմոր առ նմին և զՊակմնայն՝ գնաց՝ ի լաւուէ, և ամրացաւ յոյժ. և զեղբայր իւր զ իպարիտն երկոքումբք որդւովք առաքեաց առ

ԱՌաբակն Ելուկուղ՝ ածել՝ ինմանէ զօրս յօդ-  
նութիւն։ Խակ թագաւորն Գհեռդի եկեալ՝ ոչ  
գտաւ զնոսա յՆգարակին։ ապա նստեալ՝ ի վերայ  
բերդին հեսար զաւուրս քսան և հինգ՝ էառ զնա,  
և կոտորեաց զպահակմն, և էառ յաւարի զբազ-  
մութիւն գանձուց նոցա և զամենայն ստացուածս,  
և եկեալ բանակեցաւ շուրջ շլաւուէիւ։

Եւ զի գԺ անն Հըրոտից ամսոյ եմուտ խւանէ  
'ի լաւուէ, և եկաց մինչև 'ի հինգն ՄԵՀԵԿԻ,  
վասն որոյ նեղեալ բերդացեացն՝ սկսան ազատքն  
մի մի կախաղանօք 'ի դիշերի եջանել ընդ պարիս-  
պըն, և անկանել առ թագաւորն։ Ապա և մեծա-  
մեծ դետեպուլայն՝ որք էին սիրելիք և համախոհք  
խւանէի, սկսան 'ի ծածուկ գիր գրել պատգամի,  
և ընկենուլ նետիւք 'ի բերդն առ խւանէ վասն  
հաւանութեան, զի երկնչեին 'ի դալստենէն Ելո-  
կուղ ԱՌաբակին։ և էր գիրն այսպիսի ինչ։

»ՄԵՃ Խւանէ Օրպելացի,  
Քաջ և հզօր անպարտելի,  
Որ աշխարհաւ ես Ճենացի,  
Տոհմ ինքնակալ թագաւորի։

Եկեալ յաշխարհո յայս Վրայի,  
Գտեալ պատիւ անկշռելի,  
Պետ և գլուխ տանս արքունի,  
Եւ սպասալար Գհեռդէի։

Թե քո հանգիատք քեզ պիտի,  
Կեանք և պատիւդ ցանկալի,  
Եւ հայրենիսդ անչափելի,

Որ կէս Վրաց տանս է աւելի  
 Թռող դու զերդումն զառաջի,  
 Զուխտն և զանդարձն զայն Դաւթի.  
 Ե'կ հնազանդեա Գէորգէի,  
 Վրաց հզօր թագաւորի:  
 Բե՛ր և մատո՛ ընծայ բարի՝  
 Զմանուկ Դէմնայդ որդի Դաւթի,  
 Որ քեզ պատճառ եղեւ չարի,  
 Կա և բազմաց յայսմ աշխարհի ու:  
**Տեսեալ զայս թուղթ՝ Խւանէի, գրէ և նա պա-  
տասխանի, և կապէ՛ի նետն յայն և ընկէց արտաքս.**  
 »Ո՛վ դէտէպուլք իմ սիրելի,  
 Մեծ և հզօր իշխանք բարի.  
 Ես իւանէ Օրբեթեցի՝  
 Ընթերցայ զդիրս ձեր խրատի :  
 Բայց չեմ հաւան այս խորհրդի՝  
 Զոր գրեցիք յայսմ թղթի .  
 Մարդ որ կենօք յայս զբաղի,  
 Թռողու զաւանդն տէրունի,  
 Ուխտադրուժ ինքն լինի,  
 Առնու զբաժինն ուրացողի,  
 Յանանց գեհեանն պապակի ,  
 Եւ 'ի գիւաց գունդն դասի :  
 Ես անցաւոր մարդ ցնդելի՝  
 Վասն առօրեայ կենաց պատուի  
 Զկարեմ կոխել զուխտն որ եղի ,  
 Ստել զերդումն սոսկալի :  
 Այլ մեք վասն առօրեայ կենաց յայսմ բանի .  
 Երթամ առ տէրն իմ ցանկալի ,  
 Առնում ստացուած անձառելի ,  
 Որ յումեքէ ոչ կողոպտի ու :

Եւ զայսթեղետն | բացի լեզուաւ դրէին. սակայն մեք 'ի հայ յեղափոխեալ բան յարմարեցաք :

Ապա իբրև իմացան զայն անխոնարհելի կամն նորա, սաստկացուցանեին զպատերազմն: Եւ Պատմնայն այն անմտաբար երկուցեալ՝ եւ 'ի գիշերին, և կախեալ ընդ պարիսպն՝ իջաւ և գնաց առ հօրեղբայրն իւը, և անկեալ առ ոտս նորա՝ հայցեր շնորհել նմա միայն զկեանս: Օ որ տեսեալ թագաւորին՝ խրախանայր մեծապէս, և յղեր պատգամաւորս առ խռանէ՝ և ասէր. «Ա ամս որոյ մարտնչեիր դու և վրէժինդիր լինեիր, եկն առ իսպրդ՝ դու վասն ում ապստամբիսդ ե'կ առ իս»: և նորա ասացեալ՝ «Յերաւի է զոր հրամայէ, բայց երդնուցու ինձ՝ զի ոչ վնասեացէ և ոչ յափշտակեացէ 'ի հայրենեաց իմոց, և ես եկից առ նա:» Եւ երդուեալ Պատորգէ՝ կապէ ուխտ մեծամեծ դաշամբ ընդ նմա: Ա ամս որոյ համարձակեալ եկն առ թագաւորն :

Խսկ թագաւորն ինդացեալ մեծապէս՝ զաւաշինն ընկալաւ զնա սիրով, և փառաւորեաց մեծաշուք պատուվ, մինչև էած ընդ բուամբ զամնայն որդիս և զազդատոհմն նորա: Եւ ապա ստեաց Պատորգի իւրում ուխտին և սոսկալի երդմանն, և կալաւ զխռանէ, և փորեաց զաչս նորա, և զՊատմայն որ երփեսայացեալ խռանէի՝ ըմբըռնեաց, և փորեաց զաչս նորա: և յերանացն (ետ)

յապաւել . զի մի' լիցի ասէ ժառանգ՝ ի նմանէ :  
 Խոկ զկրտսեր եղբայրն Խռանէի դՊավթարն, և  
 զորդին Ամբատ, և զեղբօրորդին զԽնայն ետ սպա-  
 նանել և զամենայն ազգատոհմն նոցին և զարու-  
 մանուկն, նա և զկանայսն առ Հասարակ ետ ջնջել  
 և կորուսանել, զոմանս խեղդամահ, զոմանս ջրա-  
 սոյզ, զոմանս քարավեժ : Եւ այսպէս եքարձ ՚ի  
 տանէն Արաց զանուն նոցա, և հրամայեաց ջնջել  
 զյիշատակ ազգին (Օրպելեանց)՝ պատմագրենաց  
 իւրեանց նա և յեկեղեցեաց, և ետ դրել զրոյց  
 այսմ ապստամբութեան, ոչ որպէս եղեան էր՝  
 զիրաւացի պատճառն, այլ՝ ըստ իւրում քա-  
 րուցն մեծամեծ զրուցաբանութիւնս յօդեալ և  
 պատուաստեալ՝ ՚ի վերայ նոցա . և կարգեց նզովս՝  
 զի մի' ևս յիշեսցեն զանուն նոցա, և մի' թողցեն  
 ՚ի նոցանէ զոք ՚ի Արաց աշխարհն . և եղ զայն  
 կտակ չարի յիւրում գանձարանին . և այս եղե  
 ՚ի ո՞նզ թուականին : Եհա այսպէս եղեւ զրաւ  
 զրկանացն և սպանումն և հալածումն (Օրպելեանց  
 ՚ի բնիկ հայրենեաց իւրեանց, որ ՚ի գալօտենէն  
 նոցա՝ ՚ի Շենաց աշխարհէն մինչև ցայն վայր թուի  
 գու աւելի քան զհազար ամ :

Ոմանք զրաբանեն զնոսա՝ եթէ անձանց խո-  
 կալով փառս՝ կամեցան ինքեանք առնուլ զթա-  
 գաւորութիւն, որ և ամենեիմբ սուտ են, որպէս  
 շուն հաջեն . այլ վասն ուխտին և երդմանն Պաւ-

թի թագաւորի՝ 'ի վերայ որդւոյ նորա զկեանս  
իւրեանց 'ի մահ եղին, որպէս օրէն է ուխտապահ  
և տիրասէր արանց, զորոց զրկողացն և զրկելոցն  
դատաստանն Աստուած գիտեսցէ յիւրում անա-  
չառ դատարանին :

Հայց Լիպարիտն Եղբայր Խւանէի՝ որ գնա-  
ցեալ էր առ աթաքակն Լուտկուղ Երկոքումբք  
որդւովք Ելիկումաւն Խւանէիւ, շարժէր զտունն  
Պալսից, և բազում հեծելօք գայր յօդնութիւն  
Եղբօրն իբր վախսուն հաղարաւ : Ապա լուեալ  
շ գոյժ չար պատահման՝ ասէ . « Անմեղ քրիս-  
տոնեայքն զինչ մեղան՝ զի Երթեալ կորուսից  
զնոսա : Եւ արեան պարտք մեր յուր Երեխն՝ զի  
զնոսա ընդ բուամբ ածից » : Պարձաւ անդրէն  
և դադարեաց առ Լուտկուզին . և 'ի դառն կըս-  
կըծոյն և 'ի չարաչար սգոյն սակաւ աւուրս կե-  
ցեալ՝ մեռանի յօտար աշխարհի : Եւ որդիք նորա  
Ելիկումն դադարէ անդրէն : Եւ Եղբայր իւր գնաց  
առ ամիրայն Գանձակ, և անդ բազում փառս  
և պատիւ գտեալ դադարէ . զոր և յետոյ բա-  
զում ողոքանօք և Երդմամբ յաւուրս Յօամարին  
դարձուցին անդրէն, և ետուն 'ի հայրենեաց իւրոց  
զ( )ըբեթ միայն . յորմէ ծնան որդիք . և այժմ  
նոքա են ( )ըպելք . այլ 'ի հալածելն զ( )ը-  
պէլքն՝ բաժանեաց զհայրենիս նոցա Գէորգի .  
զումանս ետ թշնամեացն և մատնողացն, և զայլսն

ետ Խոփչախին՝ որ Խոռոպասար կոչիւր, զոր վերագոյն ասացաք, և մատոյց զնա՞ի գահ իշխանութեաննոցա, և եղ սպասալար ամենայն Արաց:

Բայց ինքն Գահորդի ոչ ուներ ժառանգ թագաւորութեան, բայց միայն դուստը մի՛ ֆռամար անուն, և վախճանեցաւ ՚ի ո՞լգ թուականին: Եւ կալաւ զթագաւորութիւն դուստըն, որում ածին այր զորդի թագաւորին Բուրզոց, որում անուն էր Գահորդի: Սա էաւ զի՞առին քաղաք, և սակաւակեաց եղեալ մեռանի: Եւ առնու ֆռամարն միւս ևս այլ այլ՝ Սօնլան անուն, և լինի նմա որդի մի Աշաղօրդի անուն:

Բայց յետ վախճանին Գահորդէի թագաւորին, ֆռամարն մեծարեալ զորդին Սարգսի՝ որդւոյ Օաքարիայի իշխանի՝ հայ ազգաւ և ուղղափառ հաւատով՝ զՕաքարէ և զՎանէ՝ բարձրացուցանէ ՚ի փառս և ՚ի պատիւս • զՕաքարէ կացուցանէ ՚ի տեղին (Օբելեանց՝ ամիր սպասալար Արաց, և տայ նմա զհայրենին (Օբելեանց զԱւուէ. և զեղբայրն Խւանէ կացուցանէ աթաբակ ՚ի վերայ աշխարհիս հայոց և Արաց. որք բաղում ջանիւ թափեցին զաշխարհս ՚ի Պարսից, և առին յԵռանայ մինչև ցԵրքի Բասեն, և ՚ի Բարկուշատայ մինչ ՚ի Արքընկերտ: Եռին զիարս և զԱղաշկերտ և զիաղղվան, զԱյուրբ Մարի և զՄնի, զԵնքերդ:

զ՞աջնի և զԳառնի, զՊավին մայրաքաղաք, զԳարդ-  
ման, զԳանձակ, զՇարէաքն, զՇելք, զՇամ-  
քոր, զՇաքի, զՊարտաւ, զՇարաբերդ: Ե՛ւին  
և 'ի ո՛կ թուականին զԱխւնիս, զԱրոտնն, զԲորո-  
դան, զԲաղեն, զԲարգուշատ: Եւ թէպէտ յայլ  
և յայլ թուականի առաւ, սակայն հասարակն սոքա-  
սուին և որդիք իւրեանց, և ազատեցին զաշխարհս  
'ի դառն ծառայութենէ Տաճկաց:

Խոկ Ելիկումն՝ մնաց 'ի տան Ե՛թաբակին, գըտ-  
եալ գութ և սէր յոլով 'ի նմանէ և յորդւոց իւ-  
րոց 'ի Փահլաւանէն և 'ի Խողիլ Ե՛սլանէն, և պա-  
տիւ և փառս բարձրագոյն 'ի վեր քան զամենայն  
մեծամեծ աւագագոյն Ե՛րեաց և Պարսից աշխար-  
հին: Եւ ետ նմա Ե՛թաբակն զմեծ քաղաքն հա-  
միան, և կոչեաց զնա որդի իւր, և հաստատեաց  
նմա հայրենիք տուղրայիւ գրոյ և մանշուրաւ, և  
կացուցանէ զնա ամիրայ և քաղաքապետ մեծ մայ-  
րաքաղաքացն Պարսից՝ Ըսէոյ, Ե՛սպահանայ և  
Խազմինին զամն երկոտասան, և նեղէր զնա Առլ-  
տանն փեսայանաւ ինքեան, և առնուլ զմեծ մասն  
աշխարհին: և թողուլ զհաւատն Քրիստոսի: Եւ  
Ելիկումն թէպէտ տղայ էր հասակաւ, այլ լի' էր  
հանձարուլ. ոչ տայր տեղի բանիցն, և ոչ թուլա-  
նայր 'ի հաւատոցն: Ա ամս որոյ նեղեալ 'ի Պարս-  
կացն և երկուցեալ 'ի հաւատոյն՝ զի մի' բռնադա-  
տեսցեն, ինդրէ պատճառանաւ տեղի 'ի Պախ-

զաւանու գաւառի ասե «Այս Երկիրմօտագոյն է  
 'ի Ա Երս. և յանտից հեշտ է ինձ առնուլ վրեժ  
 արեան հարց և եղբարց իմոց»։ Ինդ որ հաճեալ  
 Աթաքակին՝ տայ նմա զբերդն Երնջակայ, և  
 զահուկն աւան, և զՔալասրահն 'ի Ա, ախջա-  
 ւան, և այլ բազում տուրս և կացուցանէ (զնա)  
 դործակալ և զօրագլուխ այսմ կողման։ Եւ զի  
 բաժանեալ էր զաշխարհն իւր Երկուց որդւոցն,  
 և տուեալ էր զիսորասան և զԱրաղ և զնելքի  
 բաժինն Պարսից՝ Խզիւ Ասլանին՝ որ թարգմանի  
 կարմիր առեւծ, և զվերի կողմն Պարսից և զԱր-  
 պատական և զԱրան և զԱ, ախջուան՝ Փալհաւա-  
 նին, վասն որոյ զձեռն նորա դնէ 'ի ձեռն Ելիկու-  
 մին, և ապասպարէ նմա ասելով։ «Դու դմա հայր  
 Եր, և դա՝ քո որդի»։ և ուղարկէ զնա բազում  
 փարթամութեամբ և Երևելի փառօք 'ի քաղաքն  
 Ա, ախջաւան։ Եկեալ ապա Ելիկումին, և տիրեալ  
 այսմ նահանգի, կոչէ առ ինքն զեպիւկոպոն Աիւ-  
 նեաց զտէր Ատեփանոս որդի տեառն Գրիգորի,  
 և մեծաւ խնդութեամբ ընկալեալ զնա՝ անկանէր  
 առաջի նորա, և խոստովանէր զյանցանս իւր մե-  
 ծաւ զղջմամբ, և խնդրէր 'ի նմանէ օրէնս։ Եւ  
 նորա հաղորդեցուցեալ զնա յօրինացն՝ եղ ձեռս  
 'ի վերայ, և օրհնեաց զնա։

Ապա յետ այնորիկ 'ի խնդիր լինէր Ելիկումն  
 ամուսնութեան, և ոչ գտանէր 'ի քրիստոնէից

զոք պատշաճ իւրոյ խնամութեանն , զի աշխարհս  
այս դեռ ևս 'ի ներքոյ իշխանութեանն կարսից էր:  
Ա ասն որոյ հաւանեալ խնամութեան Աիւնեաց  
Եպսին տեառն Ստեփանոսի , զի հոգեոր աստի-  
ճանաւ բարձր էր քան զնա , խնդրէր 'ի նմանէ ըզ  
դուստր քեռ նորա 'ի Շահուկ . զի էր քոյր նորա  
կին ազատաղգիև փարթամ առն միոյ Շահկեցւոյ՝  
որում Աթաս ասէին . զոր մեծաւ խնդրութեամբ  
յանձն առեալ եպիսկոպոսին՝ վիեսայացուցանէ զնա  
ինքեան , տալով զօրիորդն գեղեցիկ և մեծա-  
հաւատ՝ Ելիկումին՝ որում անուն Խաթուն Ճա-  
նաչիւր: Եւ լինի 'ի նմանէ որդի մի գեղաղէշ պա-  
տանի , զոր անուանէ յանուն հօր իւրոյ Լիպարիտ:

Եւ այսպէս կեցեալ բազում առուրս , եղե  
օր մի հիւանդանալ նմա հիւանդութիւն մեծ. զոր  
լուեալ մեծի Աթաբակին եկն 'ի տեսութիւն 'ի  
Շահուկնաւան , և նստեալ մերձնմին՝ նեղէր զհե-  
ւանդն ասելով «Ես վասն այն եկի՝ զի ինձ մեծ  
տուրս արասցես»: և նա ասէր «Ու աբքայ , հրա-  
մայեա եթէ զինչ է խնդիրդ քո , և կամ զինչ  
հաճոյ թուի քեզ , զի ընծայեցից քեզ»: և նա  
ասէ «Ոչ գանձք և ոչ այլ ինչք պատուական պի-  
տոյ են ինձ , բայց եթէ զհաւատդ շնորհեցես ինձ ,  
և առցես զդենս իմ»: Եւ մինչ կարի ստիպեաց ,  
ապա ողորմելին այն նեղեալ և ցնորեալ 'ի ցա-  
ւոցն , և խուճապեալ 'ի Աթաբակին՝ իրը խելա-

գար իմ ցնդեալ ընդ բանսն ասէ . « Եղիցի ըստ  
 բանի քում » . ընդ որ խրախացեալ մեծապէս լ՝  
 թաքակին՝ կրկնէր նմա ծունը : Եւ յարուցեալ  
 գնաց ’ի մեծս իջելով, և անանցական գրով ետ  
 զռահուկ և զՔալասրահն, և ’ի Կախջաւան յա-  
 գագ փողոցին երեսուն կուղպակ ազատ և թար-  
 խան յամենայն հարկաց՝ փոքրիկ մանկանն լ՝ իպար-  
 տի՝ լինել նորա ազգէ յաշգ հայրենիք : Ի՞նչոյ  
 Ելիկում ողջացաւ ’ի ցաւոց ըստ խնամոցն լ՝ ս-  
 տուծոյ, և յոյժ զղջացեալ՝ գնացառաջի Առլտա-  
 նին և լ՝ թաքակին, և ուրացաւ զտաձկութիւնն ,  
 և վերստին խոստովանեցաւ զՃշմարիտ հաւատն  
 Քրիստոսի և ասէ « Ո՛վ տեալք իմ, եթէ կամ  
 է ձեզ՝ ես կացից իմ հաւատովս, և միամիտ սրտիւ  
 ծառայեցից ձեզ . և թէ ոչ՝ ես պատրաստ եմ ’ի  
 մեռանել վասն հաւատոյս իմոյ » : Եւ նոքա վասն  
 յոյժ պնդութեան առնն ոչինչ նեղեցին , այլ՝  
 թողին զնա ’ի կամս իւր . որ և կեցեալ սակաւ մի՝  
 գնաց ’ի պատերազմ ընդ որդւոյ լ՝ թաքակին ’ի  
 Գանձակ, և անդ սպանաւ : Եւ մնաց փոքրիկ ման-  
 կիկն լ՝ իպարիտ որբ առ մօրն իւրում . զոր իբրև  
 իմացան գլխաւորք քաղաքին , ածին զմայրն և  
 զմանուկն ’ի Կախջաւան և պահէին ’ի պանտանտի,  
 զի մի առեալ մօրն փախիցէ . և Տաճիկ մի բռնա-  
 բարեալ զԼյաթունն՝ ածէ ’ի տուն իւր, և առնու  
 զնա կին : Եւ սնանի մանուկն ’ի տանն այն՝ անծա-

նօթ լեաւ քրիստոնէուն աւելի քան զտամն ամ։  
 Եպա մինչ տիրեցին յայսմ աշխարհի Օ աքա-  
 րէ և խւանէ, և տկարացաւ տունն Պարսից, ըս-  
 կըսան յոյզ առնել եթէ գոյ ոք յորդոցն լի է-  
 պարտի ՚ի Պարսկաստան ։ որոց ծանուցանէ մեծ  
 եպիսկոպոսն Ախոնեաց տէր Ատեփանոս աներն  
 Ելիկումին, եթէ կայ մանուկ մի ՚ի քըւերէն իմմէ՝  
 լիպարիտ անուն, և է ՚ի պահեստի ՚ի Շախ-  
 ջաւան ։ Ի՞նդ որ յոյժ խնդացեաւ Օ աքարէ և  
 խւանէ՝ թախանձեցուցանեն զեպիսկոպոսն հա-  
 նել հնարիւք զմանուկն անտի։ Եւ զի էր եպիսկո-  
 պոսն յոյժ ծանօթ և սիրող տանն Լ թաքակին,  
 խաբեաւ պատրող քանիւք՝ ՚ի ծածուկ փեսայա-  
 ցոյց ինքեան, տալով նմա զամենօրհնեաւ և զգե-  
 ղեցիկ օրիորդն զԼ սփայն ։ Ի՞նդ որ առ ժամ մի  
 ցասուցեաւ Լ թաքակին խւանէի՝ յետոյ հրամա-  
 նաւ թագաւորին տայ փոխան հայրենեաց լի է-  
 պարտին անանցական գրով զնուշկաբերդ իւր գա-  
 ւառովն, և այլ բաղում գեղարէք ՚ի Վ այոյ ձոր,  
 ՚ի կոտայսն՝ զԼ ալառն և այլ գիւղս յոլովս, ՚ի  
 Գեղարքունի՝ զնամասրի և այլ գեղարէք բա-  
 զում, ՚ի կայեան՝ զԼ զստեաւ՝ իւր կերովն ։ Եւ  
 զի նա եղեւ առաջնորդ առմանն Ախոնեաց և այլ  
 բերդոցն, տայ և ՚ի ձեռս նորա զԱխոնիս, զԱ-  
 րոտն, զԼ արկուշատ և զայլ բերդորէքն։ Եւ կա-  
 ցուցանեն թագաւորն լաշայ և Լ թաքակ խւանէ

Ղ իպարիտն կողմակալ այսմ աշխարհի. նմանա-  
պէս և զմիւս իշխանն՝ զամէնօրհնեալն զԱ ասակ  
իսաչենեցի զհայրն քրիստոսասէր բարեպաշտ  
պարոնին Պոլոշայ՝ կացուցանեն կողմակալ՚ի Ա ա-  
յոյ ձորոյ գաւառիս . որ և մեծաջան վաստակօք  
բաղումն նահատակեալ՚ի վերայ քրիստոնէից և  
եկեղեցեայց՝ օրհնեցաւ և գովեցաւ յամենայն աշ-  
խարհաց , որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի  
յայսմ հետեւ մինչև յաւիտեան :

Խակ ամէնօրհնեալն Ղ իպարիտ մեծաւ բարե-  
պաշտութեամբ քաղաքավարէր . շինեաց և եկե-  
ղեցի՚ի Կորաւանսն , և զարդարեաց և փարթա-  
մացոյց զնա , որպէս վերադոյն ասացաք : Եւ մայր  
սորա մեծաւ ճգնութեամբ ապաշխարեալ բա-  
զում ամն՚ի նեղագոյն խրծնի՝ վախճանեցաւ և  
եղաւ՚ի Կորավանս՚ի դրան սուրբ կարապետին :  
Եւ եղեն Ղ իպարիտի հինգ որդիք՝ Ելիկումն ,  
Սմբատ , Խուանէ , Փախրդաւլայն , Տարսային :  
Եւ ինքն յետ ամաց ինչ ՚ի մէջօրեայ հասակի  
առնու հարուածս ՚ի ճանապարհի յանկարծադէպ  
նետից ՚ի գլուխ լերինն՝ որ հանդէպ բերդոյն  
Կորտոյ . և եկեալ անկանի ՚ի բերդն Պոլոշտի  
Ա անիցն , և կոչէ առ ինքն զեպիսկոպոսն զտէր  
Ամրգիս , և հաղորդեալ անդէն վախճանի : Եւ բե-  
րեալ դնեն զնա ՚ի Կորավանս ՚ի դրան սուրբ  
կարապետին առ մօր իւրում : Եւ կին նորա և

որդիք մնան որբ և անտերունչք. բայց գեղեցիկն  
Ելիկում փեսայացեալ Գրիգորոյ Ապահա-  
նեաց՝ որէ յազգէ Ապահիկոնէից, համբաւի, և վա-  
րել զտերութիւն հօրն :

Խակ մեծ սպասալարն Օ աքարէ մեռանի 'ի  
ոկա թուականին . և Լ թաքակն Խռանէ յերկա-  
րեալ այլ ևս ամս հնգետասան՝ մեռանի 'ի ոչը  
թուականին : Եւ զսպասալարութիւն Օ աքարէի  
առեալ էր որդին՝ Ը ահանշահ. էաւ և զաթա-  
բակութիւն որդին Խռանէի՝ Լ ւագն, որ և էաւ  
կինզ Պառնցայն. կեցեալ յիշխանութեանն ամս իգ:

Բայց պատմեցից ձեզ աստանօր զրոյցս զար-  
հուրեցուցիւս. զի նախ քան զայս հալածական եղ-  
եալ 'ի թաթաթարէն Սուլտանն Խորազմաց Պ ալա-  
լադինն՝ որդի Խորազմ շահին՝ գայ ընդ Պարս-  
կաստան, և անցեալ ընդ Լ րպատական՝ մտանէ  
յաշխարհս Հայոց. և յօրտեղ հասանէր՝ աւերէր  
գերփէր ապականէր, ոչ խնայելով 'ի մարդ կամ  
յանասուն . ապա եկեալ յլ բարատեան գաւառ՝  
բանակ հարկանէր անդ : Ա ամս որոյ ժողովեալ  
Խռանէի աթաթակին զամենայն զոյժ և զօրութիւն  
Հայոց և Ա բաց՝ կամէր մարտիւ պատահել նոցա:  
Եւ կացուցանեն զոմանս դետ և աղդարար ին-  
քեանց՝ զ Ը ալուէ ոմն և զ Պարիգոր կանչող . որք  
տեսեալ յոյժ նուազ զզօրն Խորասանի՝ կանչեն  
և աղդեն մերոց զօրացս՝ եթէ եկայթ: Խակ նա որ

տերն է յաղթութեանց, կամելով կամէր եղծանել զանօրինեալ և զամբարշտեալ ժողովուրդն. փոխարկեաց զձայն աղդարարացն յականջս սոցա՞ եթէ փախի՞ք . որք և թողեալ անդէն զկարասիս իւրեանց և զվանսն՝ աճապարեալք յերիվարսն փախեան, և իբր խելացնորեալք առանց սրոյ և զօրութեան նա և պատերազմի, վիթեալք (\*) ընդ փրթվածս մեծ քարին՝ որ 'ի խրամին Գյառնոյ, առ հասարակ հասեալ (\*\*) կործանեցաւ. և լ' թաքակն Խւանէ տան արամքք զերծեալ՝ անկանի 'ի Բեղեամուրն. և լ' խպարիտնիւրայօքն գտեալ կածանմիգնայ. և եկեալ ամբողջ 'ի տուն իւր գոհանայր գտեառնէ: Եւ էր այս 'ի ո՛չդ թուականին :

Խակզկնի այսմանհնարին պատուհասիւք և զանազան դիպուածովք ապականեալ եղեւ աշխարհս ամենայն. զի գտեալ Խորազմիքն զաշխարհս անտերունչոյ յանխնայ կոտորեցին և գերեցին, և հըղեհեցին զամենայն շինուածս տանց և յարկաց քաղաքաց և գիւղից և վանօրէից, այրեցին և զվաստակս ամենայն, և հարին զայգիս և զծառս: Վ ամս որոյ սով սաստիկ տիրեաց առ հասարակ . եկն և օձ թանձրագին՝ որ եւայր յամանս և յանկողինս 'ի տուե և 'ի գեշերի . եկեր և մարախն մեծմինչ 'ի ծովն Ավկիանոս, և էած սով առ հասարակ

(\*) Գուցէ Հւշեալ : (\*\* ) Գուցէ հասեալ :

մարդոյ և անասնոյ . և ամենեքեան առ Հասարակ  
ապահաստ անկեալ լինեին լերանց և դաշտից և ձու-  
րոց . սակա որոյ և անկաւ գայլ մարդակեր, և զմնա-  
ցեալն 'ի սրոյն և յօձոյն և 'ի սովոյն և 'ի մահոյն  
նոքա գիշատեալ սատակէին . և այս երկու պատ-  
ճառաւ, մի՛ զի սովորեալ էին յուտել զմեռեալն,  
և մի՛ զի մարդիկն ներգեեալ և նքողեալ էին 'ի  
սովոյն : Եւ ահա այս պատուհաս տիրեր (\* ) յաշ-  
խարհիս զամն եօթն :

Իսկ 'ի մետասան ամի զարթոյց տեր յարեւելից  
զազգն 'Ետողաց՝ որ Առուղալք կոչեին, և ըստ  
գեղջկացն 'Օռաթարք, որ 'ի Չին և 'ի Առաջին  
աշխարհէ անդրքան զլվայաստան՝ անաստուածք  
և անօրէնք, բայց բնութեամբ օրինացն զարդա-  
րեալք, ատեցողք աղտեղի գիշութեանց և ամե-  
նայն վնասակար գործոց, արդարամիտք և հնա-  
զանդք առաջնորդի իւրեանց, իրաւարարք և իրա-  
ւադատք, իսկ բարուք աղքատք և ընչաքաղցք, նե-  
րիչք և կեղեքիչք մարդկան, պատկերով յոյժ գե-  
ղեցիկք և լերկք ըստ կանացի դիմաց, և ծանօթք  
Քրիստոսեան հաւատին, և յոյժ սիրողք քրիստո-  
սէից, յաղեղունս կորովիք, և յամենայն պատե-  
րազմունս յոյժ հնարաւորք : Բայց յետոյ թողին  
զբնական բարս իւրեանց, և ելին 'ի հայրենի սահ-

(\*) Գուցէ պետք :

մանեն՝ զոր ունեին, մախն ընդ Առահմետի օրինօքն, և ուսան զամենայն պղծութիւնս և անկարգութիւնս և յանառակ կեանս վարին : Ենիւ սոքաբարժանեալ յերիս առաջս՝ գնացմինն ընդ արևելից հիւսսով յաշխարհ Խաղորաց և Սուտաղաց, Ռողաց և Չարգաղաց և Բուլղարաց, և տիրեցին նոցա սահմանացն մինչ ՚ի Լալամանց և Եւակուաց՝ որք են Փուանք, որոց գլխաւորին Բաթու Պահ: Խակ միւս կողմն գնաց առ Հնդկաստանօք, որքտիրեցին մեծ մասինն Հնդկաց և Հնազանդեցին զԱւղորս և զԱւղուզս և զԽորազմիկս և զՄելէմիկս, և առին զԼալամալեխ և զԲահպալեխ և զամենայն կողմանսնզայն, որոցգլխաւորՀաւքթաՊահանն: Խակ միւս կողմն եկին ընդ մէջ աշխարհիս՝ անցեալ ընդ մեծ գետն Գհան և ընդ ջուրն՝ զոր ինքեան Լումումօրան կոչեն. և պտուտկեալ փոթորկեալ հասին յաշխարհս մեր, և առհասարակ տիրեալ Հնազանդեցին զամենայն տիեզերս, կոխեցին կործանեցին զամենայն թագաւորութիւնս, առին զԽորասան և կործանեցին զմայրաքաղաքսն նոցա՝ զԲալխ և զՀարէ, զԱռվը և զԵշաւուրն, զԾունն և զՄամղանն. առին զԽուժաստան, զԼաւաստան, զՊարսկաստան, զՔրդաստան, զԼարապկաստան . առին զՄախարպաքն՝ որ է Լուսորեստան, զՀօշթար և զԲըման, զՄաղտատ և զԲասր մինչ ՚ի Խոմկքաղաք և ՚ի ծովն Հնդկաց . առին և զԼատրպա-

տական, զլուան և զհայաստան, զլի երս և զհու-  
 ռոմն մինչ յլնկիւրիայ և 'ի Գամնգուրիայ և  
 Օմիւռնիայ Եպիեսացւոց. և զկիւրիկիայ մինչ 'ի  
 ծովն Ավկիանու և 'ի ծովն Պոնտոսի 'ի Տրապիզոն  
 քաղաք. առին և զտունն Ը ամայ զլուրհայ և զլսա-  
 ռան մինչ 'ի Համն Համայ: Բայց զառաջինն եկն  
 յաշխարհ Սօրմանն և Սաղատայն, Ծալանն և  
 Ծաւուրն և Պատա Պանն, և առին զաշխարհս 'ի  
 ոճե թուականին: Յետոյ եկն Հուլաւու Պանն՝  
 թուն մեծի Սանգղ Պանին, և զմնացեալն  
 յառաջնոցն՝ էառ զլաղտատ քաղաք, յորում և  
 եսպան զխալիֆան 'ի չէ թուականին, և զլու-  
 ֆարղինն էառ 'ի չը թուին՝ զամ մի պաշարեալ,  
 և գնաց մինչեւ յերուսաղէմ. էառ զհալպ՝ որ  
 է Բերիայ, և զիմբէխ՝ որ է Պամասկոս, և  
 զՊալպաք՝ որ է Ծարէք. էառ և զմեծն Ծնտիոք՝  
 որք կամաւ հնազանդեցան. էառ զլերուսաղէմ 'ի  
 Ասրացւոյն. և այնպէս բազում և անհուն քաջու-  
 թիւնս եցոյց: Եւ զի յոյժ սիրող էր քրիստոնէից,  
 վասն որոյ ամենայն ազգք հաւատացելոց կամաւ  
 հնազանդէին նմա, և յոյժ ձեռնտու և օգնական  
 լինէին: Եւ արդ այսքան. մեք դարձուք անդրէն  
 'ի կարգ բանիս :

Օ առաջինն մինչ եկն Խաթարն յաշխարհս  
 այս՝ մեր գաւառքս անկեալ էր 'ի բաժինն Ծալան  
 'Եղինին. և էր Ելիկումն ամրացեալ իւրօքն յանա-

ոիկ ամուրն հրաշկաբերդի: Եկն Ասլան Կայն և  
 շրջեցաւ ընդ բերդովն, և ծանեաւ՝ զի անհնարին  
 էր 'ի մարդկանէ: ապա իջանի հանդեպ բերդին,  
 և յղէ պատգամաւորս առ նա և ասէ «Արա ընդ  
 մեղ սէր, և եկ առ մեղ, և բազում բարութիւնս  
 գտցես 'ի մէնջ: ապա թէ ոչ՝ մինչ յերբ նստիս  
 'ի քարիդ յայդ: մեք չեմք գնալոյ յայսմ աշխար-  
 հէ: այլ Աստուած հայրենօք ետ զայս մեղ: երբ  
 և է՝ ելանես 'ի դմանէ: և կորուստ լինի քեզ և  
 տան քո»: Եռեալ զայս Ելիկումին՝ ոչ դիմացաւ  
 բանիցն, այլ քաղցրութեամբ պատասխանեալ՝  
 խնդրեաց երդումն, և եւ ընդ առաջ նորա բա-  
 զում ընծայիւք: Եւ տեսեալ զնա Ասլանին՝ յոյժ  
 սիրեաց, և ընկալաւ զնա, և արար խաղաղութիւն.  
 և կալեալ զնա առաջնորդ՝ գնաց մինչև յլնի, և  
 հնաղանդեր զամենայն: Եւ առ նա զի այոյ ձոր և  
 զԵղեգիս մինչ յերերաւսն գիւղ՝ որ է հանդեպ  
 Գրաւնոյ, և ետ զամենայն Ելիկումին և ասէ «Ճարով  
 առածն և ոսկւով գնածն միապէս հայրենիք է մար-  
 դոյն: Արդ զոր ես սրով իմով առի՝ այս գաւառք  
 քեզ լիցի 'ի հայրենիս և աղգի քո: և դու միա-  
 միտ սրտիւ տես զմեղ, և ծառայեա զՊանն մեծ՝  
 որ առաքեաց զմեղ աստօ: Եւ նորա բազում շնոր-  
 հակալեալ առեալ և յամենայն սրտէ և ծառայեր  
 նոցա: Եւ յայնմ օրէ և յապա հաստատեցաւ այս  
 լինել հայրենիք տանն և աղգին (Օրբելեանց:

Խոկայլ զօրագլուխքն հնազանդեցին զայլ աշխարհս. և բերին զօր ագն 'ի դուրս 'ի բերդէն կայենոյ, զբոամբ ածին և զթագաւորութիւն Արաց, և եղեն միահեծան ամենեքեան։ Ապա յետ ամացինչ գնաց թաթարն և տարաւ ընդ իւր զզօրսըն Արաց, և զԱւագն և զՀահանշահ. ընդ որոց գնաց և Ելիկումն 'ի վերայ քաղաքին Արտիրոսաց՝ որ 'Եփրկերտ կոչի և պատնէշ ածեալ շուրջանակի՝ նստան 'ի վերայ բոլոր քաղաքին բանականօք ամօք և ամնօք, և ոչ կարացին առնուլ զնա։ Անդէն հիւանդանայ Ելիկումն խրստագոյն ցաւօք, և որպէս ասեն՝ դեղակուր լինի 'ի բժշկաց 'ի հրամանէ Աւագին. զոր և բարձեալ բերին 'ի 'Եռավանս և եղին 'ի դրան սրբոյ 'Եսաւավկային. թողլու որդի մի Բայրթէլ անուն յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առոյգ հասակաւ։ Ապա տիրէ Եշխանութեամբ նորին եղբայրն իւր ամէնօքհնեալն և գովելին բնաւից Ամբատ, որ էր հանձարուլ մեծ, խորհրդու ուժեղ, խելօք անման, հնարիւք բազմագէտ, բանիւ առատ և քաղցր, լեզուաց հմնւտ և ձարտար, 'ի դատարանի տիւանին անպարտելի. զի խօսէր լեզուս հինգ, հայ և Արացի, Ուղուր և Փարսի և զՄուղալն իսկ։ Ավարժեալ 'ի մանկութենէ յաստուածային պատուիրանին 'էր մեծահաւատ և բարեպաշտօն, սիրող որբոց, և եկեղեցեաց և վանորէից շինող, և սփու

փիչ և մխիթարիչ քահանայից, ողորմած աղքատաց, կանգնիչ և զօրացուցիչ վշտագնեալ աղգիս հայոց, գերեթափ և աղատարար ամենեցուն:

Ի՞նչ յետ իշխեկումին բազում նախանձու և թշնամութեամբ վարեթունն լուագին ընդ տունն ( )ըբելեան, ևս առաւել Գառնցայն՝ կինն լուագին. և կամէին վարատել և հալածել կամ կորուսանել զորք մնացեալ մանկունսն՝ զԱմբատ և զեղբայրս իւր . և յափշտակէին զհայրենիս նոցա. և նոքա շրջէին թաքստեամբ աստ և անդ : Ի՞նդ որ խանդաղատեալ արարչական սիրոյ՝ կամեցաւ կանգնել և զօրացուցանել զտունն ( )ըբելեան՝ ի ձեռն Ամբատայ. քանզի ընդ այնժամանակս էր զօրագըլուխ՝ Եւտողացն որպէս թագաւոր՝ ի վերայ ամենեցուն՝ Ի՞նչու Եղինն, և նստէր՝ ի գաւառին համբանդայ՝ ի գլուխն Զագէ ձորոյ . և էր ածեալ զբուամբ զփոքը թագաւորն Առնաց զՄաւեթ . և կայրնա՝ ի մէջ բանակի նոցա՝ ի կալանս . ապա ըստ վերին խնամոց զերծեալ հնարիւք՝ ի գիշերի՝ անց գնաց փախստեայ երեք արամբք : Եւ ունէր առ ինքն գոհար մի պատուական յոյժ լուսաւոր, և տեսիլ նորա կարմիր, յորմէ հատանեին նշոյլք երը՝ ի հրոյ, և՝ ի գիշերի լուսաւորէր զտունն որպէս ջահ . ունէր և մասն մի փրկական փայտէն զորս՝ ի կշիռ եղեալ էր իւրում թագաւորութեանն բովանդակ: Եղեւ սմա անցանել ընդ գլուխ

գեղջն՝ որ Պառատենի կոչի · ազդ լինի և տեառն  
 զեղջն՝ որ Յօանկը Ու ու կոչեին · այս ազատացն  
 Ամբատայ · և հեծեալ յերիվար՝ ձիարձակ լինի  
 զինի · և հասեալ կամէր արգելուլ զնա · Խակնորա  
 'ի մեծ ահի եղեալ՝ արձակէ 'ի կըծիցն զփոքրիկ  
 քսակ պայուսակին՝ տայ ցՅօանկը Ու ու ն · և ասէ  
 «Ումես դու» · և նա ասէ «Ես Ամբատայ եմ ( ) ը-  
 բէլեան» · ասէ «Տար զայդ և տուր ցԱմբատ, և  
 ասա թէ այդ գին է թագաւորութեան իմոյ, առ  
 և պահեա զդա · եթէ ես 'ի դուրս գամ և թա-  
 գաւորեմ իմոյ աշխարհիս, առ իս բերցես, և տամ  
 քեզ երկիր և քաղաք զոր դու խնդրես · ապա թէ  
 ոչ ելանեմ 'ի Առացաշխարհէն, այդ քեզ լիցի» ·  
 Եւ ինքն անցեալ գնաց և եմուտ յամուր և յան-  
 ծուկ աշխարհն Առաց, և այլ ոչ եւ անդից մինչև  
 մեռաւ անդէն · Խակ Յօանկը Ու ու լուրերեալ զայն  
 մեծաւ խնդրութեամբ 'ի տուն իւր, և պահեալ ա-  
 ռուրս ինչ՝ ետ 'ի Ամբատ · զոր և առեալ նա գո-  
 հանայր զլուսուծոյ, և խորհէր 'ի միտս իւր և  
 ասէր «Եթէ պահեմ զսա՝ վնասէ ինձ, զի ոչ  
 ծածկի և ոչ դադարի առ մեզ · այլ տանեմ զսա  
 առ մեծ Ու անն՝ որ թագաւորաց թագաւոր է, և  
 տիրեալ է ծովու և ցամաքի, որ կոչի Անանկու  
 Ու ան, այսինքն սպիտակ թագաւոր, որ էր թոռն  
 Չանկը Ու անին, և խնդրեմ 'ի նմանէ ողորմու-  
 թիւն վասն աշխարհիս այս» · Եւ յարուցեալ գնաց

առ Առաջու Եղին, և ցուցեալ նմա զլուսատու գու  
հարն՝ ասէ Ովամ առ դու և պարզեեա ինձ զոր  
խնդրեմն, և կամ ուղարկեա զիս առ մեծ Պահն՝  
զի տարայց նմա զսա» : Տեսեալ նորա և զար-  
մացեալ՝ ասէ «Լոյդ անդիւտ և անդին ջուհար է.  
Ես ոչ Եշեմ առնուլ զայդ այլ ուղարկեմ զքեղ  
առ մեծ և աշխարհակալ Պահն» : Եւ ապա ածեալ  
պատրաստութիւն Ճանապարհին ըստ պիտոյիցն՝  
տայ և յիւրոցն օդնական նմա, և յուղարկէ զԱրմ-  
պատ ՚ի Շին և ՚ի Առաջին՝ յաշխարհն Եկտո-  
ղացն՝ ուր աւագ տախտն է արքայութեան նոցա,  
առ Անկու Պահն որդի Գայուկ Պահին որդոյ  
Շանկը Պահին առաջին թագաւորի նոցա :

Իսկ Ամպատայ շրջեալ՝ ՚ի վանորայս մեր՝ որք  
կային ՚ի դառն հարկապահանջութեան, տայր ա-  
ղօթս առնել գիշերապաշտամամբ, և յանձներ  
զինքն սրբոցն, և ուխտեր ուխտ, զի թէ դարձի  
աջողմամբ՝ զամենայն քահանայս ազատեսցէ՝ ՚ի հար-  
կէ, և ամենայն եկեղեցեաց ընծայատու լիցի, և  
զամենայն յափշտակեալ հայրենիս դարձուսցէ ան-  
դրէն: Եւ այսպէս պաշար առեալ զաղօթս բազ-  
մաց՝ գնայր զՃանապարհն. և անցեալ ընդ անհուն  
ասպարեցս երկայն Ճանապարհին՝ հասանէ յաշ-  
խարհն արևելեան, ՚ի գահն աշխարհակալ Պահ-  
նութեանն՝ զոր Պարաղուրում կոչէին: Եւ զի  
քրիստոնեայ էր օրինաւոր Անկու Պահն այն,

և ուներ 'ի դրանն պաղատանն եկեղեցի և քահանայս, յորում միշտ պաշտօնն և պատարագն անխափան լիներ. և ինքն յոյժ սիրեր զքրիստոնեայն, զորս և արքայուն կոչեին. և աշխարհն ամենայն կային 'ի քրիստոնեութեան: Ապա տեսանե նախ՝ Ամպատ զամենայն մեծամեծն և զդրան աւագ խորանին, և ծանուցանե նոցա զպատճառ գնալոյն. որը տարեալ յանդիման առնեն մեծի արքային, և ընծայեն զգոհարն պատուական: Ո՞նդ որ յոյժ հաճեալ՝ գովեաց. և հարցաներ ցնա՝ եթե զիսչ ազգ ես: Եւ ասէ «Հաւատով քրիստոնեայ եմ, և ազգաւ հայ»: Ա ամ որոյ աւաւել սիրեաց զնա, և զպատճառ գնալոյն հարցաներ: Եւ նա զամենայն բաւանդակ ցուցաներ նմա, զնեղութիւն եղբօրն՝ որ առ Եւսլան՝ Երինն, և զամենայն որպիսութիւն աշխարհիս ծանուցանե: Որում յոյժ հաւանեալ, և մտադիւրութեամբ ընկալեալ զբանմն, ապա տայ զԱմբատ մօրն իւրում, և յանձնե նմա՝ որում անուն Առւրախ թամբեկ կոչիւր, և ասէ «Օ այս մին արքայունս մեզ պահեսցուք, և ոչ տացուք այլ ումեք եշխել 'ի վերայ դորա»: Եւ անուանեցին զնա Ենցու, այսինքն տերունի, և հրամայեցին կալ 'ի դրանն աւուրս ինչ. և յանձնեցին գործակալացն տալ օր ըստ օրէ յարքունուստ զւոչիկն: Որ և զամն երիս զցայդ և զցերեկ յաղօթելոյ և յարտասուելոյ ոչ դադարեր: Եւ զի ու

ներ ընդ ինքն Ամպատ մասն մի փոքրագոյն յոյժ  
 նշանագործ • զոր եղեալ առաջի իւր 'ի գիշերի  
 միում յիւրում խորանին, յերեկորեայ մինչ ցա-  
 ռաւոտն կայր բաղկատարած առաջինորա, և յոր-  
 դաբուխ արտասուօք հառաջեր և պաղատեր: Եպա-  
 նշան ահեղ երեսեալ լիներ յերկնից 'ի վերայ խո-  
 րանին • զի կամար լուսեղեն կայր 'ի վերայ նորա,  
 և խաչ 'ի վերայ կամարին, յորմէ ցոլմունք և  
 նշոյլք բոցեղենք հատանեին, և 'ի սաստիկ ճառա-  
 գայթիցն լայնութիւն անհուն համատարած բա-  
 նակին լուսաւորեալ լիներ: Եւ ամենեքին առ հա-  
 սարակ դռոհ տուեալ՝ 'ի դռուն արքունի գումա-  
 րեին՝ զարհուրեալք 'ի տեսլենեն: Եղդ արար-  
 եալ արքայի՝ գայ և նա արտաքս և տեսանե, և 'ի  
 մեծի զարմացման եղեալ՝ դոհութիւն և փառք  
 տայր Եստուծոյ: Եւ կոչեալ զմի 'ի խորհրդակա-  
 նացնիւրքիստոնեայ՝ Եսորի ազգաւասե «Ե՛րթ  
 և նշանեան զվրանն զայն, զի վաղիւն ծանիցուք թէ  
 ում իցե»: Եւ ինքն Ամպատ անգիտանայր այսմ  
 ամենայնի: Խակ 'ի լուսանան կոչեն զնա առ արքայ:  
 Եւ նա տեսեալ ասե «Պաեռ աստ է սա»: Եւ ասեն  
 «Եյն»: Եպահարցանե ցԱմպատ «Օ ինչ էր այն՝  
 զոր տեսաքյայսմ գիշերի 'ի վերայ վրանին քո»:  
 Եւ նա երկուցեալ ասե «Ոչ գիտեմ ինչ, արքա-  
 յից արքայ»: Եսե «Օ այն ամենայն ճառագայթն և  
 զահեղ երեսումն ոչ իմացար յայնքան ժամն յեր-

կարեալ» : Եսէ Ամբատ « Պահտէ Եստուածն իմ,  
 զիքնաւոչ եմ հասու» : Եսէ Ու անն « Օ ինչ ունիս  
 ընդ քեզ' ի սրբոց ձեր » : Եսէ Ամպատ « Ոչինչ ,  
 բայց միայն փոքր նշանիկ մի » : Եսէ « Ի եր առ իս զի  
 տեսից » : Եւ եքեր՝ փութանակի : Հարուցեալ  
 արքայի՝ էջ՝ ի գահոյիցն, և ծունը կրկնեալ բա-  
 ցաւ գլխով՝ համբուրեաց զնա և ասէ « Հայոց չափս  
 և յայս ձես եր իսան լուսեղին զոր տեսաք . սա է  
 նա Ճշմարտիւ » : Եւ յայնմհետէ և յառաջ այնքան  
 սիրեաց և պատուեաց զԱմպատ, և հաւատաց բանի  
 նորա, զիքարձրացաւ քան զամենայն դրան աւագա-  
 նին : Եւ հրամայեաց տալ Ամպատայ զինչ և ինդ-  
 ընցե : Եւ ետուն նմա փայիզա ուկի, որ եր տախ-  
 տակ՝ ունելով զանունն Եստուծոյ և զարքայի  
 գրեալ՝ ի յինքեան : Եւ այս եր մեծագոյն պատիւ  
 նոցա : Եւ գրեն՝ ի առլեխ՝ որ է հրամանք, զոր  
 մեք սիզէլ կոչեմք : Եւ տայ նմա զամենայն առածն  
 թրով Եսլանին, և զԱլրոտնն իւր երկրովն՝ որ եր  
 առ ի աչուին և իւր մեծամեծացն, և զբերդն ի առ-  
 այ իւր կերովն, վասն սպանման հօրն որ անդին՝  
 Լիպարաի որպէս գին արեան լեալ : Եւ եհան ըշ  
 Ամպատ՝ ի դուրս յամենայն դավթարաց՝ ի Արաց  
 և յայլոց : Եւ ահա այս կրկին հաստատութիւն եղին  
 հայրենեացնոցա . զի առաջինն թրով առած եր  
 որպէս ծառայ՝ որ ի ձեռն Եսլան Արյին, և երկ-  
 ընդդս արքայատուր և որպէս զնոյ մեծագունի ա-

ուեալ ընդ լուսատու գոհարին : Եւ հրաման էառ  
ազատել զամենայն եկեղեցիս հայոց և քահանայս .  
և այնպէս մեծաշուք Ճոխանայր 'ի դրանէ արքունի :

Եւ եկեալ փութանակի հասաւ (Ամբատ) յաշ  
խարհս յայս . և ծագեաց խաղաղութիւն որպէս ա  
րեգակն 'ի մէջ գիշերի . և նախ յանդիման լինի  
Բաշունին և այլ գլխաւորացն . և 'ի նոցանէ ևս  
առեալ օդնութիւն՝ էառ և թափեաց զերկիրն  
Արոտան բովանդակ մինչ 'ի սահմանն Յորոդանայ  
և Բաղենոյ, յորում և կայր ընդ աւեր աթոռն Աիւ  
նեաց Տաթե : Իւառ զեղեգիս և զամենայն գաւ  
առն Ա այոյ ձորոյ, զՓոշահանսն, զԱւրծ և ըզ  
Ա եղէ իւր ձորովն մինչև յԵրերունս և 'ի կու  
տայսն և 'ի Գյեղաքուն 'ի բազում շենս և աւանս .  
և ազատեաց զեկեղեցիս և զքահանայս իշխանու  
թեանն, և ամենայն աշխարհիս հայոց շինեաց  
զվանորայս և զամենայն աւերեալ եկեղեցիս . և  
բազում խնդութիւն (եղե) քրիստոնէից : Եւ զի  
աթոռն Աիւնեաց կայր աւեր 'ի բազում ժամանա  
կաց, և ծերացեալ էր եպիսկոպոսն տէր Յովա  
նէս, և եղբօր որդի նորա՝ տէր հայրապետ՝ հրա  
մանաւ կնոջ Բաշունին սկսեալ էր շինել զվանքն,  
և կայր 'ի նմին աղքատութեամբ . զի այնքան ժա  
ռանգութեանցն որ լեալ էր . ոչ տուն մի՛ անգամ  
ոչ կայր եկեղեցւոյն . զոր և սեպհականեալ Ամպա  
տայ ինքեան՝ սկսաւ ամենայն ջանիւ հոգ տանել

շինութեան և փարթամութեան եկեղեցւոյն, և  
զյափշտակեալ ժառանգութիւնս դարձուցանել  
անդրէն :

Խակ մինչ այսպէս լինէր, ապա բարիատեացն  
սատանայ սկսաւ նախանձ արկանել և գրգռել ըլ  
տունն Աւագին և զմեծամեծսն Արաց. և զի Աւ  
ագն վախճանեալ էր 'ի ողթ թուին, և կին նորա  
Գրոնցայն ունէր դուստրմի Խոշաք անուն և իշխէր  
ամենայն իշխանութեան նորա, վասն որոյ ժողով  
վեցան 'ի Տփխիս առ Արղունն՝ որ էր Ա ազիր և  
Պասխաղ կարգեալ 'ի մեծ Ու անէն 'ի վերայ ա  
մենայն աշխարհիս, այսինքն հրամանատար ամե  
նեցուն և իշխեցող արքունի հարկացն և մեծ տիւ  
ւանին: Արար (նա) աշխարհագիր զաշխարհն ա  
մենայն 'ի չեղ թուին: Եւ բազում կաշառօք խնդրէ  
ին կորուսանել զԱմբատ և ոչ ժառանգեցուցա  
նել զերկիր նորա, զոր և ոչ համարձակէր Ար  
ղունն . այլ առին 'ի Ամբատայ բազում տեղիս, և  
զմացեալսկեղեքինսաստկապէս: Ա ամսորոյհարկ  
եղեւ նմա վերստին գնալ առ Մանգու Ու անն. և  
առեալ 'ի տանէն Ասլան՝ Աոյինանց իւր օգնականս՝  
գնաց յաջողմամբն Աստուծոյ: Բայց զի նախ քան  
զերթան սորա՝ կոչեալ էին զԱրղունն 'ի դուռն  
վասն մատնութեան ինչ . և 'ի հասանել սորա  
անդ կայր նա 'ի կապանս . և Աւեխճ պէկ ոմն, և  
Կարափառին դիւան այսմ աշխարհիս, կամէին

սպանանել զԱրդունն , և ինքեանք գոլ 'ի տեղի  
 նորա . և Աւեխաճ' պէկն Շշնամի էր Ամբատայ . և  
 կամէր սպանմամք դաւել զնա : Խակ այն ինչ 'ի հա-  
 սանել նորա 'ի պաղատն՝ յանդիման լինէր Ան-  
 գու Պահաճին : Եւ նորա տեսեալ ծանեաւ զնա . և  
 զի յոյժ սիրէր զԱմբատ և հաւատայր նմա , կոչէ  
 առ ինքն և ասէ «Ճ'կ արքայուն և ծանո՛ ինձ զամե-  
 նայն որպիսութիւն այնմ աշխարհի և զօրացիմոց»:  
 Եւ նա կարգաւ պատմէր նմա : Ի՞պա վասն Ար-  
 դունին հարցանէ թէ որպէս աւերեաց զաշխարհն,  
 և կախէ զքահանայս, և մի սպանեալ է : Այստաս-  
 խանեալ Ամբատայ՝ արդարացուցանէ զԱրդունն ,  
 և ամենեւիմք ստէ զմատնողսն : Ընդ որ ցասուցեալ  
 արքային մեծամեծացն իւր՝ եթէ ընդէ՞ր ո՛չ ուղիղ  
 քննեն, հրամայէ վաղվաղակի ատեան դնել և քըն-  
 նել Ամբատաւ հանդերձ . զոր և վաղիւն արարին  
 իսկ : Եւ ստեալ Ամբատայ զնոսա, առ ժամայն սա-  
 տակեցին զԱւեխաճն և զԱ արափաթիւնն . և զԱր-  
 դունն հանեալ 'ի կապանաց՝ ածին առաջի արքայի:  
 Եւ մեծարեաց արքայ զնա և եղ առաջին գոր-  
 ծոյն . և կալեալ զձեռանէն Ամբատայ՝ յանձնեաց  
 նմա , և հրամայեաց գըել նմա նոր հրամանս , և  
 առաւել պնդութեամք հաստատեաց քան զառա-  
 ջինն և զժառանգութիւնն Ամբատայ : Եւ այսպէս  
 մեծամեծ յաջողմամք ելեալ անտի Արդունաւն  
 հանդերձ՝ եկին վաղվաղակի յաշխարհս . և վասն

մեծի երախտեացն ո՛չ գիտէք Արդունն թէ որով  
սիրով պատուեսցէ Ամբատ :

Խակ' ի գալն Ամբատայ յամօթ եղեն ամենայն  
թշնամիք և հակառակորդն նորա . որ և տիրեաց  
ամենայն գաւառաց և գիւղից իւրոց . բայց յետոյ  
իւր կամաւ՝ վասն սիրոյ և միաբանութեան ոմանց՝  
դարձոյց և եթող յետ աստ և անդ՝ ի գիւղից և  
յագարակաց . և զայլն հաստատեացսեպհական հայ-  
ըենիք իւրոյ ազգի և զաւակաց : Բայց եղեւ առա-  
ջին գնալն Ամբատայ ՚ի Անգու Պանն ՚ի ո՛չ  
թուականին և երկրորդն՝ յշեն թուականին : Ա-  
մեծաւ փառօք պատուեալ և սիրեցեալ լիներ  
յաչս հուլաւու Պանին, և կացուցեալ ՚ի վերայ  
բազում գործոյ իւրոյ : Աս շինեաց զհրաշակերտ  
ժամատունն ՚ի Արավանս ՚ի վերայ գերեզմանաց  
իւրոց, և արար բազում արդինս և փարթամացոյց  
զնա, և զարդարեաց զեկեղեցին, և ետ գեղանս և  
այդեստանս, որպէս վերագոյնն ասացաք : Աս գնաց  
՚ի Բասեն հրամանաւ հուլաւոյն վասն մնոպար  
փայտից, զի շինեին զմեծ արքունիքն՝ որ ՚ի Պատու-  
դաշտին, զոր Ալատաղ կոչեին : Եւ եկեալ Ա-  
շորնիս՝ գնաց ՚ի վանսն թաթլոյ . և բազում ծա-  
խիք և մեծաւ ջանիւ էառ մասն ինչ ՚ի գլույ-  
սուը լուսաւորին Գրիգորոյ, զի կայր անդ մի  
կողմն գլույն : Խառ և զգագաթ սրբոյն Գրիգո-  
րի սքանչելագործին՝ զոր բերեալ և ժողովեալ

Եր անդ վերջին Պատիկն թագաւորն Պատրա-  
տունի, և եղեալ՝ ի պահեստի՝ ի կործանման ժա-  
մանակին : Եւ բերեալ զանպատմելի գանձն աս-  
տուածային՝ զարդարեաց ոսկեով և արծաթով՝ ե-  
ղեալ յաղիւսածե պահարանի, և ընակեցոյ ՚ի  
գերահռչակ ուխտին՝ Յորավանից : Ետ և կազմել  
պահարան աւագ սուրբ Յշանին յոսկեոյ՝ ի կերպ  
աղիւսակի ունելով դրունս երկքացիկս . և գրեաց  
՚ի թիկանց կուսէ յիշատակ ինքեանց :

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ վախճանի եղբայր  
սորա՝ գեղեցկածաղիկն Խռանէ, և դնի ընդ կալի-  
կումին . թողու զաւակ մի բարեբոյս Խիպարիտ ա-  
նուն : Եւ յետ սակաւուց մեռանի միւս եղբայրն՝  
Քաջ սպառազէնն Փախադաւլայն, և դնի ընդ նոսա:  
Խռկ եղբօր որդին սոցա Բախրմէն դնաց ընդ  
զօրս Հուլաւուին՝ ի պատերազմ՝ ի չժ թուակա-  
նին : Եւ յետ այսը փոխի ամէնօրհնեալ մայր սոցին  
Կոսփայն՝ ի չժք թուին, և դնի ընդ որդւոց իւրոց:  
Եւ մնայր Ամբատայ օգնական միայն կըսեր եղ-  
բայրն իւր Տարսային, որ էր այր զօրեղ և պա-  
տերազմող և յաջողակ յամենայն գործունակ և բա-  
րեպաշտ և աստուածասէր յոյժ, որ առեալ էր  
իւր կին յասմայելացւոցն զդուստրտեառն Աիւնեաց  
Վրուղ խաթուն, որ եղեւ քրիստոնեայ և էր  
լի՛հաւատով և երկիւղած յատուծոյ. յորմէ ծնան  
որդիք երեք՝ Ելիկումն, Ատեփանոս՝ որ կոչեցաւ

յեպիսկոպոսութիւն, և Փոխրադաւլայս: Եւ տիրէր  
 Տարսայիձն կողմանն Արոտան: Այս զարդարեաց  
 զմեծ եկեղեցին Տաթևոյ՝ ի սպասս և ՚ի զգեստս  
 զեղեցիկս: և ետ ՚ի սուրբ եկեղեցին զվաղնջուց  
 յափշտակեալ ժառանգութիւնս՝ զհաժիս իւր  
 սահմանովն, զօյուր իւր սահմանովն, զիսոտ իւր  
 սահմանովն, և զիւր ձեռատունկ այգին՝ ի Խորա-  
 գետ, և զբեթի վանս իւր սահմանովն: և գըէ  
 ինքեան արձան յիշատակի՝ ի վերայ սեանն հարաւա-  
 յին, ու ունէր օրինակ զայս: «Այս գիր յիշատակի  
 և արձան անջնջելի է իմ Տարսայիձիս՝ եշխանաց  
 եշխանի՝ որդւոյ մեծին Լիպարտի՝ եղբօր Ամբա-  
 տայ մեծի եշխանի կողմակալի այսմնահանգին, որ  
 եշխեցող է այսմ գաւառաց: ՚ի դրանէ Բարգու-  
 շատայ մինչև ցսահմանն Բարձնոյ, միաբանեցայ  
 Տաթևոյ սուրբ առաքելոցս, և տուի զիմ հոգւոյ  
 մասն՝ ի յիմ սեպհական ուխտոս՝ ի սուրբ եկեղե-  
 ցիս դիւղս երիս, զորս լուեալ էաք՝ ի հին ժա-  
 մանակաց ժառանգութիւն լեալ սմին, զնուհեր,  
 Հիսոտն աւան սահմանօք իւրովք՝ լերամբ և դաշ-  
 տիւ, և ՚ի խոտագետ զմեր ձեռատունկ այգին, և  
 զօյուր իւր սահմանովն՝ լերամբ և դաշտիւ, և  
 զհաժիս իւր սահմանովն՝ զորոյ զկեսն գանձագին  
 էի արարեալ, և ՚ի Բորտի զբեթի վանսն իւր  
 սահմանովն: Եւ եպիսկոպոսք տեղւոյս՝ տէր հայ-  
 րապետ և տէր Առղոմն, հաստատեցին մեղ յիշա-

տակ, և կարգեցին պատարագ յամենայն ամի մին  
 քառասունք զժյայտնութեանն, զժյատկին, զժյ  
 Աստուածածնին, զժյաւագ տօներոյն, զժի օրն  
 ինձ Տարսայիս, և զժի օրն՝ իմ եղբօրն Ամբատայ:  
 Արդ՝ որ յետ մեր կամ՝ ի մերոց կամ յօտարաց  
 կամ յիշխանաց կամ՝ ի ձեռնաւորաց՝ այս հաստատ  
 պայմանիս և անքակ վճռիս խափանել ջանայ, կամ  
 զայն գեղորեքն կամ զայգին յայս եկեղեցւոյս հա-  
 նել խորհի, բաժին ընդ ՀՅուդայի և ընդ այլ խա-  
 չահանուացն եղիցի (նմա), և զիլայենին և զամե-  
 նայն չարագործացն առցե (նա) պատիժս, և յե-  
 րից սուրբ ժողովոցն նզովեալ եղիցի. և թէ Տաճիկ  
 աւագ փոխի ու յափշտակել ջանայ, Աստուծոյ  
 և յիւր փեղամբ պարեն ապիզար եղիցի, և ընդ սա-  
 տանայի՝ ի դժոխս իջցե, և տամբք և զաւակօք  
 ընջեալ և բարձեալ եղիցի, և իւր հալան նմա  
 հարամ և հաղար հաղար հաղար նալաթ լիցի: Ի  
 թուիս չիգ, յամսեան՝ Այեմբերի ժգ: Եւ է վկայ  
 այսմ վճռիս՝ տէր Աարդիս՝ Աորավանից եպիսկո-  
 պոսն, և Աարդիս փակակալ սուրբ եկեղեցւոյս, և  
 յիմ ազատաց՝ հասան՝ կարապետայ որդի, Արոտ՝  
 Շահլորա թուն, Աիրան՝ Աուերայորդի: հաս-  
 տատ է կամաւն Աստուծոյ. Աստուած շնահաւոր  
 արասցէ սուրբ ուխտիս: ՀՅուսովն Աստուծոյ՝ ես  
 Տարսայիձ՝ իմ ձեռագրովս հաստատեցի զընծայքս.  
 արդ՝ որ յետ իմ յիմ զաւակաց և թուանց կամ

յայլ յիշխեցողաց զմեր հոդիս զըկել խորհի, և  
զմեր յոյսն խափանել և զմեր սահմանեալս քա-  
կել ջանայ, յժը հայրապետացն նզովեալ եղիցի  
'ի մահ և 'ի կեանք . և կարեալ և ջնջեալ լիցի  
յայս կենացս և 'ի հանդերձելումն. ամէն եղիցի:

Խոկ Ամբատայ հայրագիր լեալ տանն Ապա-  
գինն խորհի ընդ այլ իշխանացն. և տան սպանա-  
նել 'ի ծովամիջի զՊռնցայն հրամանաւ հուլաւու  
Պանին: Եւ ինքնիշխեր ամենայն իշխանութեանց  
Ապագին. և տայ զդուստըն նորա զլսոշաքն 'ի կը-  
նութիւն մեծ խոճային Աահիպ դիւանին, որ ուներ  
'ի բոխն զամենայն աշխարհս տերութեան Ապա-  
գանին, որ ասի լինել ըստ մեծ դաւթխրանի դիւ-  
անին համարս հարիւր յիսուն դումանի. և մի դու-  
մանն մի բիւր է. և նա էր դիւանագլուխ և վերա-  
կացու ամենայնի. և էր այս յչժը թուին :

Ուայց մեծ և բարեպաշտ արքայն աշխարհա-  
կալ յոյսն և ակնկալութիւնն քրիստոնէից՝ հու-  
լաւու Պանն մեռանի 'ի չժգ թուականին, ընդ  
նմին և ամէնօրհնեալն Տաւղուղ խաթունն կին  
նորա, որք դեղակուր եղեն 'ի բաղմահնար խոջա-  
յէն 'ի Աահիպէն. որ և գիտէ Տէր՝ ոչ ինչ էին  
ընդհատ բարեպաշտութեամբ քան զկոստանդիա-  
նոս և զմայըն իւր հեղինէ, որք թագաւորեցին  
ամս ութ: Եւ ապա նստաւ 'ի տեղի նորա որդին  
իւր Ապագան, այր հզօր և բարի և խաղաղարար:

Եւ սա սիրող (էր) քրիստոնէից, որ վարեալ  
զնանութիւնն բարեյաղթ յաջողմամբ ամս ութ  
և տասն՝ մեռանի ’ի դաւել ոմանց ’ի Համիան  
յշլա թուականին :

Բայց Ամբատ անզաւակ գոլով, առեալ զմի  
յորդոց եղբօրն Տարսայիծին և որդիացուցեալ  
ինքեան՝ տայ յուսումն գրոց և ’ի հրահանգս քա-  
հանայութեան: Եւ ինքն յետքազում շինութեանց  
աշխարհաց և վանորեից և եկեղեցեաց և մեծա-  
մեծ և երեելի գործոց, որ անց ընդ ամենայն նախ-  
նիս իւր, գնաց ’ի մեծ դիւանն արքունի առ Ար-  
զունն, և Այսիպն ’ի Պավլուծ շահաստան, և անդ  
հիւանդացաւ հիւանդութիւն մեծ, ուր և մեռաւ  
իսկ: Եւ տուեալ զամենայն իշխանութիւնն իւր  
յեղբայրն իւր ’ի Տարսայիծն՝ յանձնէ զնա Ար-  
զունին և Այսիպին. և ինքն փոխի ’ի կարգս հրեշ-  
տակաց, մերձ գոլով նմին երանելի և սուրբ բա-  
քունին Ծալվէ, վարեալ զիշխանութիւնն մեծա-  
շուք պատուով և երեելի փառօք ամս քսան: Եւ  
եկեալ ամենայն մեծամեծացն՝ լացին զնա, և մե-  
ծապէս պատուով զարդարեցին զդադաղս նորա-  
արքայակերպ Ճոխութեամբ: և այնպէս բարձրա-  
ցուցեալ բազմականօք, խաչիւք և վառեալ շահիւք  
և մոմեղինօք, պաշտմամբ մեծածայն բազմութեան  
քահանայից, զարմացուցանելով զաշխարհագու-  
մար մայրաքաղաքն՝ հանին հանդիսիւ ընդ դուռն

նորա. և բերեալ՝ ի հայրենի դամքարանն սուրբ  
ուխտին՝ Առավանից՝ աշխարհախումբ հանդիսիւ  
եղին՝ ի տապանի ընդ հարս իւր՝ ի թուականին  
չեք: Ա ասն որոյ և շինէ եղբայր իւր Տարսային  
նմա տուն տապանի, և եկեղեցի յանուն սրբոյն  
Գրեգորի, և անդ փոխէ՝ ի հանգիստ զեղբայրն  
իւր Ամբատ: Որոյ Քրիստոս Եպուած յոյսն հա-  
սարակաց շնորհեսցէ հանգիստ և ողորմութիւն, և  
մաքրեսցէ զամենայն աղտեղութիւն ոգւոյ նորա,  
և կարգեսցէ ընդ սուրբս և փառաւորեալ իշխա-  
նացն Հայոց: և յիշատակն նորա օրհնութ եղիցի:

Ի այց լուր թէ որպիսի երախտիս գործեաց  
սա առ ազգս իւր: Եւր թագաւորութիւնն Արաց  
առ կողջ մի Ռուսուդան անուն: և էր որդի մի  
Լաշային Պատիթ անուն, զոր բազում հնարիւք  
ջանայր Ռուսուդանն այն կորուսանել զնա: Եր-  
բեմ դնէր՝ ի թափուտ և ծովասոյզ առնէր, և եր-  
բեմ տայր յիշխանսն սպանանել: և նոքա ՚ի զետ-  
նափոր յարկի պահեին: Երբեմ վարեր՝ ի հեռաւոր  
աշխարհ՝ զի անդ կորուսցեն: և յամենայնէն զեր-  
ծեալ լինէր խնամօքն Եպուածոյ: Եւ երթեալ  
փախստեայ առ մեծարքայն Անգու Պանն՝ դառ-  
նայր՝ ի նմանէ, և եկեալ թագաւորեր իւրում աշ-  
խարհին, և գտանէր սատակեալ զի ռուսուտանն:  
‘Եա առնու իւրկին զիսոյանդն՝ Ախջաւանայ զի սուկանն: առեալ էր և միւս կին զԳրոնցայն: և

ուներ 'ի նմանէ զաւակ մի Պահմէտը անուն : Եւ  
Ամբատ ամենայն հաւատարմութեամբ հպատակէր  
նմա . և բազում մեծ երախտիս ցուցանէր նմա ա-  
ռաջի հուլաւու Պահմէտը անին և առաջի մեծամեծացն,  
ևս առաւել 'ի մեծ դրանին : Եւ այնքան սիրեաց  
զնա Պահմէտ թագաւորն՝ զի հաւասարգլխոյիւրոյ  
տեսանէր . և զփոքը իկ տղայն Պահմէտըն էր 'ի ձեռս  
նորա , և տայր նմա որդի : Եւ Ամբատ բազում  
թշնամիս թագաւորութեան նորա 'ի մեծամեծ  
գուղայնոյն տայր սպանանել 'ի դրան արքունի :  
Օ ի այնքան լսող էր հուլաւուն նմա՝ զի ում կա-  
մէր՝ կեանս շնորհէր , և ում կամէր՝ մահ տայր  
ածել . վասն որոյ ամենայն ոք դողայր 'ի նմանէ , և  
ամենեցուն ակն 'ի նա հայէին :

Առդ՝ կոչե թագաւորն զԱմբատ 'ի Տփխիս ,  
և կամէր մեծամեծ պարգևօք երախտահատոյց լի-  
նել նմա : Հարց ցնա և ասէ «Որպիսի կամք են քո  
զի պարգևեցից քեզ պարգևս մեծամեծս . զի որ  
կամիս և հաճոյ է քեզ յիմ թագաւորութենէս՝  
անխնայ է քեզ» : Յոտն կացեալ Ամբատայ և եր-  
կիրագեալ նմա ասէ . «Ով թագաւոր, զոր ու-  
նիմք ամենայն՝ քո՞ է և նախնեացն քոց, և այն մեզ  
բաւական է . այլ խնդիր է 'ի քեն իմ բան մի՝  
եթէ կամիս» : Եւ ասէ թագաւորն «Երդուեալ  
եմ՝ զի զոր ինչ խնդրես՝ տաց քեզ» : Ասէ Ամբատ  
«Ինարձզչարյիշատակն մեր՝ զոր զըպարտեաց նախ-

նիս քո Գահորդի զնախնիմն իմ, և ետ գրել և  
 նղովք կարդել՝ զի մի' թողցեն զմեզ' հայրենիս  
 մեր, և պահեաց' ի տան գանձի իւրում. տուր զայն  
 'ի ձեռս իմ » : Եւ զարմացեալ թագաւորն՝ նա-  
 խատեր զհաւն իւր, թէ ընդէր զայսպիսի արք զօ-  
 բեղք և յաջողածք եհան 'ի տանէս մերմէ : Եւ  
 հրամայեաց սպասաւորացն յոյզ առնել և գտանել  
 զգերքն. որք երթեալ գտին վաղվաղակի և բերին:  
 Առեալ թագաւորն 'ի ձեռն իւր՝ յոտն եկաց և  
 ասէ «Ահա, Սմբատ, առ զգերքս զոր խնդրէիր» :  
 Յարուցեալ Սմբատայ երկիրպագանէր և ասէր  
 «Ավարքայ, մինչ այդչափ ողորմեցար՝ զկատա-  
 րեալն ցոյց առ իս բարիս. այդ գերքդ գրեալ է  
 ձեռամբ թագաւորի, հրամայեան լուցանել առաջի  
 քո կրակ, և քո ձեռամբդ ընկեան 'ի նա զգերքդ» :  
 Եւ առժամայն հրամայեաց թագաւորն, և լուցին  
 կրակ. և հանեալ զսուրն՝ կտրեաց զթուղթն և  
 ընկեաց 'ի կրակն և այրեաց : Անդ որ յոյժ խնդա-  
 ցեալ Սմբատ՝ մեծապէս շնորհակալէր նմա : Յեւ  
 որոյ և այլ բազում մեծամեծ պարզեօք և թագա-  
 ւորական զգեստիւք պատուէր և խիլայէր զնա թա-  
 գաւորն. և այնպէս դարձուցանէր 'ի տունիւր : Ահա  
 այսու օրինակաւ երարձ Սմբատ զնախնեաց իւրոց  
 նախատինս. և արար զկնի եկելոցն յիշատակ բարի:  
 Խակ զկնի սորա տիրեալ ամենայն իշխանու-  
 թեանց նորա եղբայրն իւր Տարայիշն . պատ-

ուեալ և սիրեցեալ յաշխարհակալացն և յամենայն  
 մեծամեծացն... ահարկու՝ ի վերայ ամենայն թշնա-  
 մեաց . և այնքան յարգեալ լինէր առաջի Ապա-  
 ղանին, որ բաղում անդամ զարքայական հանդերձն  
 իւր մերկացեալ յանձնէն՝ հագուցանէր Տարսա-  
 յին յոտից մինչև ցգլուխ , և զկամարն համակ  
 յոսկւոյ բազմագին ակամքը և մարգարտօք լցեալ՝  
 տայր ածել ընդ մէջ նորա: Եւ զի այր ուժեղ և  
 սրտեայ և պատերազմող էր, և հասակաւ ահարկու,  
 յամենայն պատերազմունս յոր երթայր՝ մեծամեծ  
 յաղթութիւնս առնէր, և անպարտելի զօրութիւնս  
 ցուցանէր՝ ի Խորասան,՝ ի Համբէն,՝ ի Հուումք,  
 ՝ ի Համս,՝ ի Համայ, ընդ Ասրացւոյն.՝ ի Պար-  
 բանդն . ինն անդամ վանեալ անձամքն զպատե-  
 րազմն և մղեալ մարտս: Ա ամս որոյ մեծամեծ պար-  
 գեօք պատուեալ լինէր յարքայից արքայէն . և  
 առեալ զոսկի բալիշն՝ որ էր տապարակաձե՝ ՚ի  
 չափ թղոյ մի և ՚ի կշեռ լոեր միոյ , զի այն իսկ  
 էր յաղթութեան պատիւն : Ա առեալ զթագա-  
 ւորն ՚Պաւիթ՝ գնայր՝ ի տուն Խաչենոյ առ որդի  
 մեծ իշխանին Գալալին՝ Աթաբակն , և առնոյր  
 զքոյր նորա՝ ՚ի կնութիւն զԱմինայ խաթունս առ  
 կենօք առաջին ամուսնոյն , ընդ որ ոչ հաճեցան  
 օրէնք և վարդապետք եկեղեցւոյ , և բերեալ՝ ՚ի  
 տուն իւր՝ ստացաւ՝ ՚ի նմանէ որդի մի գեղեցիկ  
 Աշլէշ , և անուանեաց զնա Գալալ . և դատերս

Երկուս, որոց զաւադն ետ ՚ի կնութիւն մեծի և  
փառաւորեալ իշխանին խաչենոյ Գրիգորոյ՝ որ  
դւոյ հասանայ, որդւոյն մեծ Գրիգորին, որ էր  
քեռորդի աթաքեկ Խռանէի . և զմիւսն ետ հօր-  
նետուն հարսն ՚ի տունն Արաց թագաւորին. կին  
եղբօրն Պատթի թագաւորին. որ էր կարգաց թա-  
գաւորին՝ որ պակասեաց յը թուականին : Աս  
շինեաց եկեղեցիս և արար բազում արդիւնս ՚ի  
վանորայս : Ետ ՚ի վանսն Յաղաց քարոյ գիւղ ՚ի  
Գևեղաքունի զՊառնկերն, և այգի մի ՚ի Աման-  
ուակաձորի . և գրէ ինքեան արձան ՚ի վերայ սրբոյ  
կարապետին . և պատարագ երեք ամ յամէ . և  
փակէ ահագին նզովիւք՝ զի մի խախտեսցեն զհո-  
գեցատուր զայն . նորոգէ և բազում եկեղեցիս  
խախտեալս և հնացեալս :

Ա ախճանի և յաւուրսն այնոսիկ բարեպաշ-  
տուհի կին սորա Արուղ խաթունն, և դնի ՚ի տա-  
պանի ՚ի դրան սուրբ առաքելոցն ՚ի Տաթև : Բայց  
յետ թագաւորութեանն Պատթի, զորդին նորա  
զՊամէտրէ բերեալ Ամբատ ՚ի տուն իւր՝ մնու-  
ցանէր ըստ պատուիրելոյ հօրն . և ապա բազում  
ջանիւ և օժընդակութեամբ նստուցանէ յաթու  
հօր իւրում թագաւոր վրաց յը թուականին ,

Խակ յետ Ապաղանին՝ որ մեռաւ յը լա թուա-  
կանին, նստի կռագուդաբն եղբօրորդի նորին՝  
Ա անամենայն աշխարհի . որ և Ահմատ անուանեաց

զինքն, և խորհեցաւ քակել զօրենս քրիստոնէից,  
 և առնել Արարաման զամենայն աղգ։ Եւ յերբորդ  
 ամի տերութեան իւրոյ եսպան ՚ի Առուղան զմիւս  
 եղբայրն զ՛ օնղըրաթայն։ և զԱյուղանն հոռ  
 մաց՝ զիսիադինն . և զերկուս որդիսն Յագանին .  
 ՚ի գարնանային ժամն գնաց անհուն հեծելով ՚ի  
 Խորասան ՚ի վերայ Արղունին՝ որդւոյ Ապաղանին,  
 զի սպանցէ զժառանգ թագաւորութեանն . և կա  
 լեալ զնա դարձաւ այսրէն։ Խակ Աստուածն քրիս  
 տոնէից յայնմ գիշերի դարձոյց զսիրտ մեծա  
 մեծացն առ Արղունն . զոր հանեալ ՚ի բանտէ կա  
 պանաց՝ թագաւորեցուցին , և սուր ՚ի վերայ ե.  
 դեալ՝ կոտորեցին զամենայն թշնամիս նորա։ հա  
 սեալ զինի սատակեցին զԱհմատն և զհամախոհս  
 իւր՝ և զՀասան Անգլի՛ եխն, զԱհիպդիւանն,  
 զԱլինախն և զայլ բաղումն : Եւ էր ընդ նոսա  
 թագաւորն Պէմետրէ, զոր սիրեաց Արղունն, և  
 ետնմա զամենայն աշխարհս հայոց՝ զտունն Աւա  
 գեան և զտունն Հահանշահեան և զՊագեցիսն .  
 և զորդիսն Աադուն աթաքակին . և ինքն էր յոյժ  
 սիրող քրիստոնէից և եկեղեցեաց : Լ՛ո և ընդ  
 նոսա Տարսայիծն, զոր յոյժ մեծարեաց և սիրեաց  
 զնա Արղունն :

Ապադարձաւ Պէմետրէ մեծաւ խնդութեամբ,  
 և ամենայն աղասք և մեծամեծք Արաց և հայոց  
 ընդ նմա։ Եւ եկեալ ՚ի Հարուր՝ գնաց ընդ ա.

ոաջ Տարսայիձն, և մեծամեծ պատուով և արքու  
 նական ընծայիւք մեծարեաց զթագաւորն։ Եւ նա  
 առեալ տարաւ զնա ընդ իւր յերկիրն Աւագեան՝  
 յԱյրարատ։ և բազում թախանձանօք բոնաբօ  
 սեաց զնա, և եղ Ա. թաքակ' ի վերայ ամենայն տե-  
 րութեան իւրոյ մինչեւ 'ի Տփխիսե յԱնիւ 'ի կարս.  
 և ետ 'ի ձեռս նորա զտղայսն իւր՝ զՄաւիթ և  
 զՄանաւիլն՝ սնուցանել զնոսա և պահել։ Եւ  
 յայնմ հետէ առնէ Տարսայիձն զաթաբակութիւն  
 աշխարհիս հայոց, և բազում դիւրութիւն և ո-  
 ղորմութիւն առնէր նեղեալ ազգիս հայոց։ Եւ  
 գնացեալ 'ի Տփխիս՝ ետ բերել զդիւանն ար-  
 քունի, և ընթերցաւ զամենայն դաւթարսն . և զի  
 էրգրեալ 'ի դաւթարսն զանուանս վանորեից հա-  
 յոց, զի 'ի նելքոյ հարկի և դիւանի կացցեն։ Ապա  
 ետ բերել զծիկն պարաւագ՝ դիւանադպրու-  
 թեանն։ Եւ փոխեաց զդաւթարն, և եհան զա-  
 նուանս վանորեիցն՝ աւելի քան զհարիւր յիսուն,  
 և զհինն այրեաց հրով. և այնպէս աղատեաց զամե-  
 նայն եկեղեցիս։ Ա, և այնքան ողորմած և գթած  
 եղեւ առ ամենեսեան, զի 'ի Աետիս գիւղ՝ որ է  
 'ի վերայ հուրաստան գետոյ՝ խաչ կանգնեին, և  
 անուամբ նորա կոչեին զնա :

Այս արար ժողով բազում եպիսկոպոսաց և  
 վարդապետաց և վանականաց . և աշխարհախումբ  
 հանդիսիւ 'ի գերափառ ուխտին Առավանից, և

ետ ձեռնադրել զորդի իւլ Ատեփանոս՝ ի քահանայութիւն յչեթ թուականին։ Եւ յետ հինգ ամի յուղարկեաց (զնա)՝ ի թագաւորութիւնն հայոց՝ ի կելիկիա՝ առ մեծ կաթուղիկոսն տեր ՀՅակոբ՝ ի ձեռնադրութիւն եպիսկոպոսութեան։ որ և՝ ի հասանելն անդ վախճանեալ էր կաթուղիկոսն։ և բազում պատիւ և փառս ընդունէր՝ ի թագաւորէն հայոց Լեռնէ։ որ և յոլով թախանձանս առնէր՝ ի կաթուղիկոսութիւն հայոց։ Եւ մինչ ոչ առնոյր յանձն, ապա արարեալ մեծ աշխարհաժողով բազում ընտրութեամբ կացուցանեն կաթուղիկոս հայոց՝ զտէր Կոստրնդին յաւուր Ճրագալուցին զատկին։ և՝ ի մեծի աւուր զատկին ձեռնադրեն զԱտեփանոսն՝ մետրապօլիտ մեծի աթուոյն Աիւնեաց՝ ի վերայ այլոց եպիսկոպոսացն՝ որ կային աստե անդ, ոմանք՝ ի Վայոյ ձորոյ և ոմանք՝ ի Տաթե։ որք և միաբան թղթովք և ընծայիւք յուղարկեալ էին զնա առ կաթուղիկոսն վասն նորոգման սուրբ աթուոյն հին պատուոյ և աստիճանին, որ բարձեալ էր՝ ի վաղնջուց վասն աւերման և կործանման աշխարհիս։ Եւ այսպէս պսակեալ Ատեփանոս սուրբ և առաքելական եկեղեցւոյն Տաթեայ՝ փեսայցուցանեն այսմ աթուոյ, և գրեն զշրջաբերական նամակն ուկեցիր մագաղաթաւ՝ մեծարգիքանիւք և հաստատուն պայմանաւ, նորոգելով զպատիւ աթուոյն զմետրապօլութեանն։ և շքեղա

ցուցեալ անհամեմատ փառօք՝ զգեցուցանեն նմա  
շհայրապետական զգեստն ոսկեթել հիւսուածով,  
և դնեն թագ պատուական՝ ի գլուխնորա: Օ այս  
կաթուղիկոսն : Խակ թագաւորն նմանապէս զգեց  
ցուցանէ՝ ի թագաւորական զգեստուցն՝ ըստ հայ-  
րապետական ձեռյն, և դնէ կրկին անգամ թագ  
պատուական՝ ի համակ ոսկւոյ՝ ի գլուխն, որ և  
զանուն թագին ինքեանք միուր կոչէին . տային և  
զեմիփորոնն մեծախորհուրդ զերեք կրկին՝ որ  
մետրապօլտացն է, և խոյր ոսկեթել մարգարտա-  
յեռ յօրինուածովք, նա և այլ բազում պարգևս  
մեծամեծս . և այնպէս բարձրագոյն փառօք դար-  
ձուցանեն այսրէն՝ ի թուականին ՀՂ :

Խակ՝ ի գալ նորա խնդաց հայրն իւր Տարսա-  
յին և եղբարքն և ամենայն աշխարհն : Ի այց  
յետ սակաւուց խանդացեալ եպիսկոպոսացն որ՝ ի  
Տաթև՝ գնացին առ այլազգին և բազում ոճիրս  
սերմանեցին, և յոլով վիշտ հասուցին եկեղեցւոյ.  
և մինչ՝ ի վախճանն ինքեանց երկոցունցն՝ տէր  
հայրապետին և տէր Յօհանիսին՝ ոչ դադարեաց  
խաղմն և խռովութիւնն :

Խակ տեառն Ատեփանոսի գնացեալ առ մեծ աշ-  
խարհական Լորդունն, և ցուցեալ նմա զնամակ  
կաթուղիկոսին՝ և ծանոյց զամենայն որպիսութիւն:  
Եւ նորա մեծապէս պատուով ընկալեալ զնա՝ յոյժ  
հաճեցաւ . և հրամայեաց գրել նմա ըստ իւր:

եանց օրինին առլեխ, և հաստատեաց զեկեղեցիսն  
և զաշխարհն և զեպիսկոպոսունսն՝ ի տէր Ատե-  
փանոս. և ետ նմա այր՝ ի դրանէն և փայիզայ. և  
այնպէս յուղարկեաց յաթու իւր. որ և եկեալ  
տիրէր ամենայնին՝ ի փառս Եստուծոյ: Եւ կային  
հնազանդութեամբ՝ ի ներքոյ նորա տէր Գրի-  
գորն՝ որ էր ազգական տէր Յօհանիսի, և տէր  
Ապրդիս՝ որ՝ ի Եսրավանս:

Ես տէր Ապրդիս, որպէս յառաջն ասացաք,  
բազում արդիւնս ցուցեալ՝ ի Եսրավանս՝ ևս ա-  
ռաւել արար գործ մի երեելի. զի՝ ի գիւղն Ես-  
փայ՝ ի վերայ գետոյն կանգնեաց կամուրջս զար-  
մանալի տաշածու վիմօք յոյժ բարձր և ընդարձակ  
և լայն հիացուցիչ տեսողաց՝ բազում ծախիւք և  
անչափ աշխատութեամբ՝ հրամանաւ բարեպաշ-  
տին և մեծափառ իշխանին Տարսայիձին. որոյ վար-  
ձատրեսցէ Քրիստոս հազարապատիկ:

Յայսմ ժամանակի երկպառակեցան զօրքն  
Պան Երղունին. և անկաւ շփոթումն մեծ՝ ի մէջ  
մեծամեծ գլխաւորացն, և հանին բազում արեան  
ճապաղիս. զի կալաւ Երղունն զմեծ զօրապետն  
զիառուղաչինքսանն, որ կոչի աւագաց աւագ կամ  
տէրանց տէր, և եսպան զնա. զի խորհուրդ նեն-  
գութեան էին խորհեալ նմա, ընդ նմա և զամե-  
նայն համախոհս նորա՝ զիսազանն և զիօռուղոյն  
հազարապետք. զԵրուխն, զԵւճանն, և զայլ

բազումն : Այսու որոյ և զրպարտեալ զթագաւորն Արաց Դամէտը՝ բաղբաղելով եղին' ի վերայ բարուրս մահու, և տարեալ սպանին 'ի տարապարտուց' ի մեծ դաշտին Առօվկանայ՝ յեզր գետոյն կուրայ 'ի թուական չլը : Խակ օրհնեալ և քրիստոսասեր իշխանաց իշխանն Տարսային, յետքազում բարեպաշտութեանց և երեելի գործոց, լցեալ զկետ կենաց իւրոց՝ վախճանի յիւրում դարապասին յԱրփայ. և տարեալ 'ի Եղորավանս մեծ աշխարհաժողով հանդիսիւ՝ դնի ընդ եղբօր իւրում Ամբատայ յիւրում ձեռակերտ դամբարանին 'ի թուականին չլը :

Եւ ապա որդիք նորա վիճեին 'ի վերայ տերութեան և իշխանութեան հօրն. որք գնացեալ 'ի դուռն արքունի՝ յանդիման եղեն աշխարհակալ Դանին Արդունի, և ծանուցին զբանս իւրեանց : Խակ նորա յառաջ կոչեալ զաւագագոյն զԵլիկումն, և կարգեալ զնա 'ի տեղի հօրն՝ կացուցանե իշխան 'ի վերայ ամենայնին : Ի՞այց թեպէտ տիրեաց բոլոր հայրենեաց և իշխանութեանց հօրն, սակայն ոչ կամեցաւ զրկութիւն առնել եղբարցն, այլ եպիսկոպոսք և վարդապետօք և աղատովք բաժանեաց զամենայն ժառանգութիւնն, և ետըստ պատշաճին զբաժին եղբօրն Գալիին 'ի նա, և զբաժին հօրեղբօրդւոյն Եփարտի 'ի նա : Եւ այնպէս կային միաբանութեամբ և վարեին

զտերութիւն յայսմնահանգի՝ մեծարդոյ և շքեւ  
 ղաշուք իշխանութեամբ պատուեալ և փառա-  
 ւորեալ յաշխարհակալաց և 'ի մեծամեծաց, պա-  
 հելով զաշխարհս զայս'ի խաղաղութեան, և զվա-  
 նորայս 'ի շինութեան: Եւ զի յայսմ ժամանակի  
 ամենայն աշխարհ աւերեալ և ապականեալ էր, և  
 վանորայք խափանեալ 'ի պաշտամանէ, ամենեքեան  
 առ հասարակ դիմեալ 'ի տերութիւն սորա՝ աստ  
 զհանգիստ առեալ զետեղէին. որպէս և եկն  
 կաթուղիկոսն Աղուանից տէր Ատեփանոսի եղբօր  
 սորա. և այլ բազում եպիսկոպոսք և վարդա-  
 պետք և յաղատ արանց: Եւ էր տեսանել շնոր-  
 հօքն Աստուծոյ զտունս զայս իբր զտապան Առ-  
 յեան 'ի մէջ աշխարհակործան ալեացն. զոր և  
 տէր Աստուած անսասանելի պահեսցէ բարեխօսու-  
 թեամբ սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց  
 մինչ 'ի կատարած աշխարհի: Ի՞նչ այսու յոյժ  
 գեղեցկացան, զի ինքեանք մարմնական իշխանու-  
 թեամբն պայծառանային. և եղբայր իւրեանց տէր  
 Ատեփանոս հոգեւոր շնորհօք և բարձր դիտապե-  
 տութեամբ շքեղանայր. և յեւեալք սիրով ընդ  
 միմեանս կային համդաբտութեամբ. ըստ այնմեթէ  
 «Օ ինչ բարի կամ զինչ վայելուչ, զի բնուկին  
 եղբարք 'ի միասին »:

Եւ ունէին սոքա բողբոջք բարեբոյսք զաւա-  
 կաց. Ելիկումին որդիք երկու, Իուրթել և Իուղ-

դայ անուն , և գուստը մի՝ զոր ետ 'ի կնութիւն  
գեղեցկածաղիկ իշխանին և մեծ կողմակալին Եղա-  
չոյ՝ որդուոյ հասանայ՝ որդոյն Պռոշայ մեծ իշ-  
խանին , որ երրորդ 'ի Ա ասակայ քաջէ , զոր վե-  
րագոյն յիշեցաք : Եակ Ե իպարտի որդիք հինգ .  
որոց երիցագոյնն Ամբատ՝ որ փեսայացեալ եր-  
տանն աթաբակ Սաղունեանց . և միւն Հովաննես ,  
զոր առեալ տեառն Ատեֆանոսի՝ սնոյց և վար-  
ժեաց ուսմամբ և ած 'ի քահանայութիւն :

Եւարդ՝ ով ընթերցողք մի' լիցի ինձ ոք պար-  
սաւադէտ , որպէս թէ զիւր ազգ յարգէ և պա-  
տուէ . և կամ կարծիք ինչ տարցի՝ եթէ առելի ինչ  
բանս յօդեալ պատուաստեցաք : Ա կայ է ինձ Տէր  
որ յիսկզբանէ Ճառիս մինչև կատարածս բազում  
ճշդիւ քննեալ գտաք զստոյգն . և զոր մեր ակա-  
նատես եղեալ՝ 'ի բազմաց զսական և զՃշգրիտն  
եղեալ կարգեցաք աստ . և թէ զօտարաց ազգա-  
բանութեանց և յիշատակաց՝ որք վաղ ժամանօք  
անցին՝ փոյթ եղեւ մեզ , ապա որբան ևս առաւել  
իմն և իմոցն : Եւ զի զայս մատեան . . . :







ԳԻՒՆ Ե

15 Հոդ". արձ".

